

3534

146

Z-85

14 JUL 2009

Quem unquam fuisse uterque videmus in scriptis
utrumque enim scriptum est

14 JUL 2009

30

918

14

«ՅԱՌԱՋ»-ի ԳՐԱԴԱՐԱՆ»

№ 48

108

113-97

ՄԻՋՆԵՒԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՓԻԼՍՈՓԱՅ

ՍՕՑԻՈԼՈԳ

Հերերոս Սպենսեր ժամանակակից աշխարհաճայեցութեան առջև

(Քննադատական էսսե)

Իրեն է 15 կող.

146
2-85

1907 թ.
Թ Ի Ֆ Լ Ի Ս

2144

«Մարտ» / Մարտի 1922 թ. 198

№ 48

«ՅԱՌԱՋ»-ի ԳՐԱԴԱՐԱՆ - 1922

№ 48

100

113-30.

146

2-85

UV

ՄԻՋԵՅԷԼ ՅՈՂՀԱՆՆԻՍԵՆ



ՓԻԼԻՍՈՓԱՅ

ՍՕՅԻՐՈՂՕԳ



գիտանում է ժամանակակից բուրժուազիայի ամենահզոր
իդէօլօգը, անհաւասարութեան թէօրիայի ամենաձեռնհաս
փաստաբանը:

Ներկայ գրածքը, որ սկսած էր «Մուրճ» ամսա-
գրում, 1904-ին, փիլիսօփայի մահից անմիջապէս յետոյ,
յաւակնութիւն չունի, ի հարկէ, ամփոփելու այն բոլոր
հրահանգիչ մտքերն ու փաստերը, որոնք սփռւած են հե-
ղինակի մի քանի հազար էջերի վրայ: Սա մի պարզ, հա-
կիրճ անալիզ է, մի քննական ակնարկ, որ նպատակ ունի
յատկանշելու սպենսերեան ուրոյն սօցիօլօգիան և որմենք
գուցէ աւելի լրիւ և աւելի ճոխ կը ներկայացնենք ապա-
գայում, երբ մեր կեանքը հնարաւորութիւն կը տայ աւե-
լի երկար կենտրոնանալու այդ տեսակ նիւթերի վրայ:

Մ. Յ.

I.

Դ Ա Ր Ի Ծ Ն Ո Ւ Ն Դ Ը

Վերջին շառաւիղ.—Սպենսերի սխտեմը, նրա հմայրը.—էօլիւցիայի բէօրի սիկոս.
—Սպենսերեան մեսաժիզիկան.—ձամաչելի և անամաչելի աշխարհները.—Ի՞նչ է
փիլիսօփայաբիւնը:

Մտքի տիտանները չքանում են մեր հօրիգօններից, թող-
նելով իրենց ետքից մի տխուր ամայութիւն... Փոխարինող առ-
այժմ չըկայ: Մարդկութիւնը ասես որբանում է, հանձարները
մանրանում են, միջականում: Ինչպէս որ հոգեկան վսեմ թռիչք-
ները, անձնուրացութեան, իդէալիզմի վաղեմի սլացքը տեղի է
տալիս հետզհետէ մեր նիւթապաշտ դարաշրջանում՝ մանր ու
չափւած առաքինութիւններին,—այնպէս և, կարծես, մտքի հոյա-
կապ արտայայտութիւնները միշտ աւելի և աւելի սակաւանում
են ու տեղի տալիս միջակ, համեստ մարգանքներին... Ո՞ւր է մի
Հէզել, որ զմայլեցնէր ձեզ՝ իր գիււային ընդհանրացումներով,
մտքի խիզախ ու վերացական թռիչքներով: Ո՞ւր է մի Դարւին,
որ բնագիտական ընդարձակ աշխարհում միահեծան իշխէր մշտ-
քերի վրայ: Ո՞ւր է այլևս մի Սպենսեր, որ կարողանար այնպի-
սի հրաշալի սինթեզի վերածել մարդկային մտքի բոլոր այլազան
արգասիքները: Ո՞ւր են տիտանները ուրիշ աշխարհներում...
Նրանք թոււմ են մի մի օաղիտներ դարերի անհուն անապատի
մէջ, որ այնքան առատ է բացասական, ոճրանիւթ հանձարներով...
Հերբերտ Սպենսեր վերջին շառաւիղն էր փիլիսօփաների մի մեծ
տոնմի, որի փառահեղ պանթէոնում արձանագրւած են Դէկարտի,
Սպինօզայի, Լայբնիցի, Կանտի, Ֆիխտէի, Շելլինգի, Հէզելի ու
Շօպենհաուէրի անունները: Վերջին շառաւիղ... Հասկանալի է,

թէ ինչու ամբողջ փիլիսոփայոյ մարդկութիւնը սուգ էր հագել 1903-ի դեկտեմբերի 14-ին, և ասես մտքով փոխադրել էր տիեզերական մայրաքաղաքի *) Golders Green-ի կրէմատորիումը, ուր տխրագին ու յուզիչ հանդիսաւորութեամբ այրում էին Սպենսերի գրիակը...

Կրակը ճարճատեց՝ անտարբեր ու մոլեգին՝ և հսկայից մնաց մի բուռն մոխիր—միակ նիւթեղէն յուշարձանը, որ բարեկամները խնամքով զետեղեցին մեռելաշունչ հիմարկութեան պատի մի փոքրիկ անկիւնում...

Սպենսերը հսկայ էր ոչ միայն իբրև մտածող, այլ և իբրև աշխատաւոր։ Նա մեռաւ 85-ամեայ զառամեալ հասակում և թողեց մի մեծ շարք հոյակապ հատորների—մի ամբողջ գրադարան։

Քսան ու հինգ տարեկան հասակից արդէն նա նւիրել էր փիլիսոփայութեան. բայց նա չըմնաց ընդմիշտ կղզիացած վերացականութեան աշխարհում, նա մտաւ նոյնպէս կօնկրետ իրողութիւնների, փաստերի աշխարհը։ Ձգտումը, սակայն, նոյնն էր ամեն տեղ—աբստրակցիայի, վերացութեան ճանապարհով ընդմանրացնել այդ իրողութիւնները և տիեզերական պէս-պէս երեւոյթներից ստեղծագործել մի ներդաշնակ սիստեմ, համայնապարփակ մի ամբողջութիւն։ Այդ է ճշմարիտ փիլիսոփայի դերը։

Սպենսերի միտքը գերազանցապէս իրապաշտ է, ըէպիստոական։ Նա շատ ուրիշ փիլիսոփաների պէս չարձամարհեց երբէք կենդանի փոստերը, ինչ աշխարհում էլ լինեն նրանք—կենսաբանութեան, հասարակագիտութեան, բարոյագիտութեան, հոգեբանութեան մէջ։ Եւ այդ բոլոր աշխարհներում նա վայելում էր ճշող, անվիճելի հեղինակութիւն։

Մենք կը քննենք Մեծ Բրիտանիայի մեծ մտածողին՝ իբրև սոցիոլոգի, հասարակագէտի. բայց սոցիոլոգիան կազմում է սպենսերեան վիթխարի սիստեմի մի անբաժան մասը, ուստի չենք կարող ժտենալ նրան, առանց նախապէս գէթ մի թուղցիկ ակնարկ ձգելու Սպենսերի փիլիսոփայութեան վրայ։

Էւոլյուցիոնիզմի փիլիսոփան հանդէս եկաւ (60-ական թուականներին) իբրև մարդկութեան մտաւոր էւոլյուցիայի մի անհրաժեշտ պահանջ։ Կենսքի հետ միասին գիտութիւնը անսովոր

*) Լօնդօն։

թուիչքներ էր գործել և ամբարել էր հսկայական, չըտեսնւած դանձեր։ Ուսումնասիրութեան լուսավառ ջանք ձեռքներն առած՝ գիտնականները պրպտել էին բոլոր աշխարհները և բաց էին արել բնութեան և մարդկային համայնակենցադի խորունկ գաղտնիքները, աստղագիտութիւն, երկրաբանութիւն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանութիւն, հոգեբանութիւն, ժողովրդագրութիւն (էտնօգրաֆիա) և այլն—հարստացրել էին բազմաթիւ ու արգասաւոր գիւտերով։ Ամեն կողմից պահանջ էր զգացւում մի ամբողջացնող աշխարհահայեացքի, մի ընդհանրական ու գերադոյն ֆորմուլայի, որը կարողանար ամփոփել իր մէջ դրական գիտելիքների այդ հսկայական պաշարը, խտացնել ու միաւորել կօնկրետ երևոյթների այդ անսահման այլազանութիւնը։

Չերբերտ Սպենսեր եկաւ այդ պահանջին գոհացում տալու։ Նրա փիլիսոփայական դաւանանքը արտայայտւած է «Նախնական սկզբունքները» վերնագրով իր աշխատութեան մէջ, որ լոյս է տեսել 1862 թ.։ Այնտեղ է, կարելի է ասել, դեկավարող միտքը Սպենսերի բոլոր միւս հատորների։ Այնտեղ է հոչակաւոր ֆորմուլան, որով նա միաւորում է տիեզերական՝ երկրաբանական, կենսաբանական, հասարակական և հոգեբանական բոլոր երևոյթները։ Այնտեղ է նաև Սպենսերի մտաֆիզիկան, նրա խորհրդածութիւններն ու եզրակացութիւնները «Իրերի ներքին էութեան» մասին, տիեզերքի նախնական և վախճանական պատճառների մասին։ Մետաֆիզիկա...

Սպենսերի պայծառ ու դրական միտքը ևս խոյս չըտեսց այդ կարգի մարդանքներից։ Նա ևս շեշտեց, ինչ որ շեշտել էին արդէն քննական փիլիսոփայութիւնը յանձին կանտի և պօզիտիւիզմը կօնտի ու աշակերտների։ Մեր գիտելիքները տիեզերքի մասին յարաբերական են, երբէք բացարձակ (աբսօլիւ), երբէք լիակատար։ Որքան աւելի ենք առաջանում մեր գիտելիքների, ծանօթութիւնների մէջ,—ասում է Սպենսեր,—այնքան աւելի ենք համոզոււմ, որ մի բան կայ՝ մեզ անմատչելի, անըմբռնելի։ Իրականութիւնը չի ներկայանում մեզ իր իսկական պատկերով, տիեզերքի հիմքը, նրա էութիւնը մի խորհրդաւոր բան է, անվերջ, յաւիտենական, անիմանալի և անճանաչելի (incognoscible)...

Ենթադրենք—շարունակում է Սպենսեր—թէ տիեզերքը իր ամենասկզբնական շրջանի մէջ եղել է բաօսային տմպաձև մի

զանգւած *) . հարց է ծագում. Թնչպէս է արդեօք նա յանգել այդ դրութեան... Մենք կարող ենք վերածել տիեզերական բոլոր երեւոյթները ոյժի կամ շարժողութեան. բայց մեզ համար հանելուկ է մնում, թէ ինչ է այդ ոյժը, այդ շարժողութիւնը ինքնիրան վերցրած: Մենք կարող ենք վերածել մեր բովանդակ մտաւոր կեանքը զգացումների (sensation). բայց թնչ են այդ զգացումները... Եւայն կայն:

Կան Սպենսերի համար երկու աշխարհներ, մէկը՝ ծանաչելի, միւսն անծանաչելի: Առաջինն յարաբերականն է, երկրորդը բացարձակը: Մէկը առանց միւսի գոյութիւն չունի: Երկուսն էլ անհրաժեշտ են, որպէս փոխադարձ լրացուցիչներ: Բացարձակը (Absolu) գոյութիւն ունի առանց որեւէ պայմանի. նա անսկիզբ է և անստեղծ:

Ընդհանրացնելով աստիճանաբար մեր ծանօթութիւնները բնութեան մասին, վերածելով նրանց միշտ աւելի և աւելի ընդհանուր Ֆորմուլաների (բանաձևերի), մենք վերջիվերջոյ պիտի յանգենք մի այնպիսի ընդհանուր ճշմարտութեան, որը այլևս անկարող կը լինենք վերածել մի աւելի ընդհանուրին: Այդ վախճանական ճշմարտութիւնը, ընդհանրացման պրօցեսի այդ վերջին օղակը կը լինի բնականաբար, անվերլուծելի և անբացատրելի: Նա ինքը Բացարձակն է, Աբսօլիւտն, Անճանաչելին, — ասում է Սպենսեր: Մենք ստիպւած ենք ընդունել նրա գոյութիւնը, թէպէտ և խիստ աղօտ հասկացողութիւն միայն ունինք նրա մասին...

* *

Թողնենք մետաֆիզիկային հանգիստ որոճալ խորհրդաւոր ու յաւէտ անլուծելի առեղծւածները, մտնենք «երևոյթների» կամ «ճանաչելի»-ի աշխարհը:

Այդտեղ է երևան գալիս փիլիսօփայ Սպենսերն իր կարող հանճարով, իր գերազանցապէս սինթետիկ (համադրող) մտքով: Ի՞նչ է փիլիսօփայութիւնը:

Սպենսերի ասելով՝ դա գիտելիքների ընդհանրացումն է, միաւորումը (unification): Գիտութիւնը տալիս է միայն փաստերի,

*) Այդպէս է Կանտ-Լապլասեան նշանաւոր թէօրիայի համեմատ:

ծանօթութիւնների մասնակի միաւորումն, այն ինչ փիլիսօփայութիւնը տալիս է իսկատարբ:

Ինչպէս որ գիտութեան մէջ ամեն-մի բարձր ընդհանրացումն՝ ծրարանում ու խտացումն է աւելի ստորին կարգի ընդհանրացումներ, այնպէս էլ փիլիսօփայական ընդհանրացումները խտացում ու ամփոփում են գիտութեան ամենաընդարձակ ճշմարտութիւնները:

Պէտք է ուրեմն կապել, ընդհանրացնել տիեզերական երեւոյթները, պէտք է միաւորել և ամբողջացնել բոլոր գիտութիւնների արդիւնքները, բնութեան այլազան արտայայտութիւններից ստեղծագործել մի ներդաշնակ սիստեմ, համայնապարփակ մի ամբողջութիւն, — ճշմարիտ փիլիսօփայութեան նշանաբանը:

II.

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՖՕՐՄՈՒԼԱՆ

Նիւթ և շարժում. — Ոյժը, իբրև գերագոյն իրականութիւն. — Բացարձակի եւ յարաբերականի զգալիւթը. — Յուսիսեմական հակոսեմաներ. — Բիւրմը սիեգերում. — Եւօլիւցիա եւ Գիսօլիւցիա:

Եւ այդ նպատակին հետամտեց Սպենսեր վաճառն տարւայ իր փիլիսօփայական գործունէութեան ընթացքում, (նա քսանուհինգ տարեկան հասակից էր սկսել իր վերացական ուսումնասիրութիւնները), և չնայած իր հսկայ ուժերին ու անօրինակ աշխատասիրութեան՝ հազիւ կարողացաւ մահւան նախնիթաց օրը աւարտել իր մեծ, հոյակապ գործը — համադրական փիլիսօփայութեան սիստեմը:

Այդտեղ, ընթերցող, դուք ակնատես էք, թէ թնչպէս է գոյացել տիեզերական վիթխարի շէնքը, թնչ ուժերի և թնչ օրէնքների գործակցութեամբ նախնական պարզ, ամպաձև զանգւածից աստիճանաբար առաջացել է արեգնային համակարգութիւնը, երկրագունդը, շնչաւոր աշխարհը:

Սպենսերի միտքը կապէս ուէալիստ է, իրապաշտական: Նա ոչ Կանտի պէս ուզեց կոտորեցանել ամբողջ տիեզերքը իր բանականութեան տարեքննելով, ոչ էլ Հեգելի պէս միշտ ուզեց սաւառնել զուտ արստրակցիայի եթերային բարձունքների վրայ...

Նա երբէք չարձամարտեց կենդանի փաստերը, ինչ աշխարհում էլ որ լինեն նրանք,—կենսաբանութեան, հասարակագիտութեան, բարոյագիտութեան, հոգեբանութեան մէջ:

Սպենսերը եղաւ էւօլիւցիայի թէօրիստիկոսը, նրա փիլիսոփան: Աստիճանական զարգացման օրէնքը որ Լամարկի ու այլոց ջանքերով շեշտեաձ էր արդէն կենսաբանութեան մէջ, նա ընդհանրացրեց, կիրարկեց ամբողջ տիեզերքի վրայ: Այդպիսի մի փորձ արել էր Հեգել, բայց Հեգել այդ արել էր լոկ արատրակտ մտքի սահմաններում, հաշի չառնելով կենդանի իրականութիւնը, նիւթի, շարժողութեան իրական գործօնները:

էւօլիւցիայի սկզբունքի վրայ Սպենսեր հիմնեց մինոր կօմօլօգիա, տիեզերագիտութիւն: Նոր ու բնական մի «արարչագործութիւն» ուր յաւիտենապէս գործակցում են նիւթը և շարժումը, ուր տեղ չունեն՝ ոչ իդէալիստական սպեկուլեացիաները, ոչ թէօլօգիական, աստուածաբանական բանդագուշանքները:

Նիւթ և շարժում... Նրանք ըզխում են մի ուրիշ էլէմենտից, մի աւելի բարձր իրականութիւնից, որը հանդիսանում է բոլոր սկզբունքների Սկզբունքը:

Ուժն է այդ գերագոյն իրականութիւնը: Նա միայուն է, անկորնչելի. նրա քանակութիւնն անփոփոխելի է, յաւիտենական: Նա չէ նմանում այն կօնկրէտ ուժին—մշտափոփոխ և անցողական—որ մենք զգում ենք մեր մկանների մէջ. նա բոլոր ոյժերի և գոյութիւնների, բոլոր նիւթերի և շարժումների վերջին արտարակցիան է, վերջին ընդհանրացող եզրակացութիւնը: Ուրիշ խօսքով՝ նա նոյն արսօլիւ, բացարձակ ուժն է, որի մասին մենք աղօտ գաղափար ունենք և որը միանգամայն անհրաժեշտ լրացուցիչ է (Corrélat) բոլոր երևելի, շօշափելի ոյժերի:

Ոյժը միայուն է տիեզերքի մէջ.—Սպենսեր դնում է այդ իբրև բանականութեան անպայման պահանջ, իբրև պօստուլատ: Այդ պօստուլատը հիմքն է բոլոր փորձերի, ուսումնասիրութիւնների և իբրև այդպիսին՝ նա դուրս է փորձի, քննութեան սահմաններից, նա փիլիսոփայական մտածողութեան չօկէտն է դառնում: Նա ինքը Բացարձակն է, Արսօլիւն:

Սա «մետաֆիզիկա» է, անշուշտ: Բայց մետաֆիզիկա է և մատերիալիզմը, որը ընդունում է «տիեզերական սուբստանցի» օրէնքը, ամեն բան ընդգրկող այդ առեղծաժը:

«Բացարձակը գոյութիւն չունի, ամեն բան յարարական է, այսպէս էր յայտարարում Սպենսերից առաջ՝ անգլիացի փիլիսօփայ Համիլտօն: Բացարձակի գաղափարը բացասական մի տարր է—աւելացնում էր նա—մենք չենք կարող կազմել նրա մասին որոշ մտապատկեր, առանց մեզ հակասելու»:

«Բացարձակ (արսօլիւ) ոչինչ չը կայ, ամեն բան յարարական է մեր աշխարհի մէջ»,—այսպէս է վկայում և սովորական մարդկային դատողութիւնը:

Բայց դա սխալ է: Յարարականութեան գաղափարը ինքնին արդէն մտածել է տալիս իր հակոտնեայի՝ բացարձակի գաղափարի մասին: Նրանք երկուսն էլ գոյութիւն ունին, որպէս փոխադարձ լրացուցիչներ: Մէկը առանց միւսի անըմբռնելի է: Կարճը էք երևակայել լոյսը առանց խաւարի, ձգողութիւնը առանց վանդողութեան, բարութիւնը առանց չարութեան:

Իրանք յաւիտենական «հակոտնեաներն» են, անտիպօզիները: Եւ երբ մենք առօրեայ կեանքում այնքան յաճախ խօսում ենք բացարձակ հաւատի, բացարձակ արդարութեան, մաքրութեան մասին, մենք շատ լաւ զգում ենք, թէ ինչ ենք ուզում ասել գրանով: Ամեն բան, անշուշտ, յարարական է, բայց «արսօլիւ»-ի, բացարձակի գաղափարը ևս անշնջելի կերպով մնում է մեր գիտակցութեան խորքերում, որպէս մի իդէալ, որին միշտ ձգտում է «յարարեականը», առանց երբէք հասնելու: Նա բացասական ու հակասական չէ, ինչպէս պնդում էր Համիլտօն, այլ նա մի զրական գաղափար է, թէև նրա մասին չունենք որոշ ու յստակ մտապատկեր:

Այդպէս է մտածում Սպենսեր: Բացարձակը, ուրեմն, ներկայ դէպքում, հանդիսանում է Ոյժի միայնութեան կամ յարատևութեան օրէնքը (La persistance de la Force):

Սպենսերի համար նա վերջին, ընդգրկող ճշմարտութիւնն է, որից գէղուկաբար կերպով ըզմարտութիւնն է, որից գէղուկաբար կերպով ըզմարտութիւնները:

Նրանից հետևում է նախ, որ 1) Այլ և այլ ուժերի փոխադարձ յարարելութիւնները մշտնջենական է, որ ուրիշ խօսքով, բնութեան երևոյթների մէջ կայ անհրաժեշտ, օրինական շրջափակցութիւն, որ նման պատճառները ամենուրեք ծնում են նման հետևանքներ:

2) Մի ոյժ կարող է փոխարկել մի այլ ոյժի, առանց իր քանակութիւնից կորցնելու: Տաքութիւնը, որոշ քանակութիւն ծախսելով, արտադրում է մի ոյժ, որ շարժման մէջ է դնում լօկոմատիւրը, և այդ դէպքում ծախսւած ոյժը հաւասարում է արտադրւած ոյժին:

Միևնոյն ոյժը երևան է գալիս այդպիսով տարբեր ձևերի տակ.—մի տեղ նա դառնում է լոյս, մի այլ տեղ՝ տաքութիւն, մի ուրիշ տեղ՝ էլեկտրականութիւն և այլն: Եւ այդ յաւիտենական մեծամօրֆօզի ընթացքում ոյժի քանակութիւնը ոչ պակասում է, ոչ աւելանում: Այդ նշանաւոր իրողութիւնը, որ Սպենսեր առաջ է բերում a priori,—ապացուցւած է հռչակաւոր Ֆիզիկոսների, Ռօբերտ Մայէրի, Ժուլի, Հելմհոլցի և ուրիշների կողմից:

3) Շարժումը առաջ է գնում այն ուղղութեամբ, ուր դիմադրութիւնը ամենաթոյն է: Այդպէս օրինակ, գետը հոսում է, ուր ամենից քիչ խոչընդոտներ կան, երկրաշարժը աւերածներ է անում սովորաբար միևնոյն տեղերում, հրաբխային գործունէութիւնը արտայայտում է որոշ գծերով և ժայթքումները կատարում են միևնոյն ճեղքւածներով և այլն և այլն: Հասարակական շարժումները ևս հնազանդում են միևնոյն օրէնքին:

4) Շարժումը րիթմային է (rythmique, չափաբերական): Բիթմը առաջ է գալիս ամեն տեղ, ուր շարժումը հանդիպում է դիմադրութեան, ուր կայ ընդհարում երկու անհաւասար ոյժերի միջև:

Ամեն ինչ ընութեան ու հասարակութեան մէջ ընթանում է բիթմով, ծփանքներով.—ալիքները որ մերթ իջնում են, մերթ բարձրանում, աստղերը, որ մերթ մարում են, մերթ փայլիում երկնակամարի վրայ, մոլորակները, որ կազմալուծւում են և կազմակերպւում մշտնջենապէս. շնչաւոր աշխարհը, որ նորոգւում է պարբերաբար, կենդանիների այլ և այլ տեսակները, որ անյիշատակ ժամանակներից ի վեր ծնունդ են առել երկրագնդի վրայ, աճել, զարգացել են և ապա անհետացել. վերջապէս, մարդկային աշխարհը, հասարակութիւնների ու անհատների հոգեկան կեանքը պարբերական ելևէջներով՝ ուրախութիւններով ու կսկիծներով, սգեորութիւններով և վհատութիւններով—ամեն տեղ երևան է գալիս անխուսափելի ձկաաազրական րիթմը, որ յատկանիշն է ամեն շարժողութեան և անհրաժեշտ լրացուցիչը Այժի մտայնութեան մեծ օրէնքի:

Կայ մի հիմնական, տիեզերական բիթմ, որին վերածուում են վերջնական ըննութեան մէջ բոլոր միւսները. նա արտայայտւում է երկու բառերով՝ զարգացում եւ քայքայում *), էւօլիւցիա և դիսսօլիւցիա:

Բացարձակ անշարժութիւն երբէք չըկայ—նիւթը և շարժումը մշտնջենապէս բաժանւում, բաշխւում են տիեզերքի մէջ: Ամեն ինչ անկայուն է, բոլոր առարկաները աճում են կամ փչանում, նիւթ են ամբարում կամ նիւթ են սպառում:

էւօլիւցիայի պրօցէսսի ընթացքում նիւթը խտանում է և ամբողջանում (intégration), կամ ուրիշ խօսքով՝ նրա մասնիկների փոխադարձ կապը ամրապնդւում է, մինչդեռ շարժումը ցրում է վատնում:

Դիսսօլիւցիայի պրօցէսսի ընթացքում ընդհակառակը՝ նիւթը նօսրանում է, նրա մասնիկների կապը թուլանում (désintégration), մինչդեռ շարժումը ամփոփւում է և կենտրոնանում:

էւօլիւցիայի պրօցէսս է կատարւում, երբ երկրագունդը իր սկզբնական հրահեղուկ վիճակից աստիճանաբար զարգանում է դէպի ներկայ դրութիւնը.—նրա կեղևը միշտ աւելի և աւելի ամրապնդւում է (նիւթի խտացում, intégration), հետզհետէ պաղելով, այսինքն, կորցնելով ներքին պօտենցիալ շարժողութիւնը:

էւօլիւցիայի պրօցէսսի ընթացքում բացի վերը յիշած երեւոյթներից՝ նկատելի են և հետևեալները.

Նիւթը միապաղաղ, հոմօթէն վիճակից (homogénéité) սովորաբար անցնում է դէպի այլատարր հետերօթէն դրութիւն (hétérogénéité): Այն ժամանակ, երբ զանգւածները ամփոփւում են, ձուլւում ի մի ամբողջութիւն, նրանց մէջ կատարւում է զանազանաւորումը՝ դիֆֆէրենցիացիա (différentiation): Ներդաշնակ ամբողջութեան մէջ մասնիկները միշտ աւելի և աւելի զանազանաւորւում են, իւրաքաչիւր մասնիկ ստանում է իր որոշ ձևը, իր որոշ տեղը: Այդ պատճառով ասւում է նոյնպէս, որ էւօլիւցիայի ընթացքում առարկաները քօսային, անորոշ դրութիւնից անցնում են դէպի յստակ ու որոշ դրութիւն:

Ամփոփելով՝ մենք ստանում ենք հետևեալ Ֆօրմուլը.

*) Evolution և dissolution—զարգացում և քայքայում կամ կազմակերպում և կազմալուծում: Հայ լեզուի մէջ չենք գտնում բառեր, որոնք այդ երկու գաղափարների ճշգրիտ թարգմանը լինէին:

26

էլօլիցիան՝ նիւթի խտացման (եւ շարժման վատնումի) արժողութիւնն է, որի ընթացքում նիւթը անկապ, անորոշ, պարզ, հոմօթէն դրուծիւնից անցնում է աստիճանաբար դէպի յարակից, որոշ, հետերօթէն եւ բարդ դրուծիւնը:

Այդ ֆօրմուլով է առաջ ընթանում տիեզերական համայն զարգացումն ու առաջադիմութիւնը: Այդ օրէնքին են հնազանդւում անօրգանական և օրգանաւոր աշխարհները, հասարակութիւններն ու անհատները իրանց անդադրում ձևափոխութեան մէջ: Վերցրէք նախնական պրօտօպլազմը, վերցրէք անասնական կամ ժարգկային սաղմը: Որքան պարզ է նա իր սկզբնաւորութեան մէջ—գրեթէ բոլորովին միատարր, հօմօթէն: Բայց անա աստիճանական, իրարու յաջորդող ձևափոխումներով՝ նա կաժաց կաժաց դառնում է օրգանների ու հիւսւածքների մի բարդ զանգւած, մի հետերօթէն ամբողջութիւն, ուր սահմանաժ է այնքան խելացի աշխատանքի բաժանում, ուր ամեն մի բջիջ ունի իր որոշ տեղն ու պաշտօնը—մի ամբողջութիւն, որ մենք անւանում ենք անասուն կամ ասուն:

Այդպէս է ամեն մի օրգանիզմի պատմութիւնը տիեզերքում: Ինքը տիեզերքը, Կանտ-Լապլասեան հոչակաւոր թէօրիայի համեմատ՝ ներկայացնում էր սկզբում պարզ, ամպաձև, հօմօթէն մի զանգւած, ուր տակաւին չըկար այլազանութեան հետք, ուր միայն գործում էին երկու ձակատագրական, հակամարտ ուժերը՝ ձգողութիւնն ու վանողութիւնը՝ (Attraction, Répulsion). հարիւրաւոր և հագնարաւոր դարերի ընթացքում այդ զանգւածը աստիճանաբար զանազանաւորեց, ենթարկեց դիֆֆէրէնցիացիայի և ծնունդ տւեց իր արգանդից անհամար համաստեղութիւններին՝ երկրազնդին ու արեգակներին, աստղերին ու մոլորակներին, որոնցից իւրաքանչիւրը մայր զանգւածից բաժանւելու միջոցին նոյնպէս գրեթէ հօմօթէն, անորոշ մի անգւած էր և միայն ժամանակի բովում, անընդհատ շարժողութեան, պտոյտների շնորհիւ, ընդունեց այն որոշ, խտացած կերպարանքը, որ դիտելի է ներկայում:

Բուսական և կենդանի աշխարհները՝ դարւինական թէօրիայի համեմատ՝ նոյնպէս զանազանաւորել են աստիճանաբար, արտադրել են հետզհետէ բոյսերի ու կենդանիների անթիւ ու այլազան տեսակներ: Դարձեալ էլօլիցիա՝ հօմօթէնից դէպի հետերօթէնը:

Քաղաքակրթութիւնը իր առաջադիմութեան պրօցէսսում, սկսած

բարբարոսութեան ամենահին ժամանակներից՝ դարձել է միշտ աւելի և աւելի այլատարր, հետերօթէն, շնորհիւ այն հանգամանքի որ աշխատանքը հետզհետէ բաժանւել է ցեղերի, ազգերի, դասակարգերի, անհատների մէջ:

Նւ այսպէս բոլոր աշխարհներում—գիտութեան, փիլիսօփայութեան, կրօնի, լեզւի, գրականութեան, արեւստի, բանաստեղծութեան մէջ և այլն—ամեն տեղ էլօլիցիան միևնոյն եղանակով է կատարում իր ընթացքը, ամեն բան՝ շնչաւոր ու անշունչ, տիեզերքի մէջ զարգանում, ձևափոխւում, առաջադիմում է, անցնեցողով միշտ պարզ դրութիւնից դէպի բարդը, հօմօթէնից դէպի հետերօթէնը, անորոշից դէպի որոշը:

Զարգացման անիւը առաջ է մղում միշտ դէպի աւելի և աւելի բարձր ձևեր, դէպի այլազանութիւն ու կատարելութիւն... Եւ սակայն—աւանդ—ուժերի յարատե հաւասարակշռութիւն երբէք չենք գտնում. արտաքին ազդակները անգույ շարունակում են չենք գտնում. արտաքին ազդեցութիւնները և վերջիվերջոյ կազմաւորւման համայնաւեր ազդեցութիւնները և վերջիվերջոյ կազմաւորւման են ամենակատարեալ, ամենահոյակապ օրգանիզմն անգամ—ծում են ամենակատարեալ, մի կենդանի մարմին, մի լինի դա մի աստղ կամ մի արեգակ, մի կենդանի մարմին, մի քաղաքական, հասարակական կազմակերպութիւն... Եւ այդ էլ միւս օրէնքն է, հակամարտ օրէնքը՝ նոյնպէս երկաթէ, տիեզերական—դիսսօլիցիայի, քայքայման օրէնքը...

III.

ԳԵՐՕՐԳԱՆԻՉՄԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ի՞նչ է սօցիոլոգիան.— Հասարակական օրէնքները և նրանց ձեւակերպելու դրժարութիւնները.— Սուրբէկիւիզմը սօցիոլոգիայի մէջ.— Մի պատմական վեճ.— Վիլիսօլ, Հէկկել եւ Օսկար Շիլլս.— Ո՞ւր է մղում Գաւրիկապոլիսը.— Սպենսերի մեթօդ.— Նախամարդիկ.— Ի՞նչ է մարդկային հասարակութիւնը.— Հասարակական եւ անհատական օրգանիզմ.— Ննամութիւններ եւ արեւուրիւններ:

Փիլիսօփային մի կողմը թողնենք և դիմենք սօցիոլոգին, հասարակագէտին:

Բնազանցական ու ընտրիլիսօփայական սպեկուլիացիաներով հարուստ է մարդկութիւնը, այն ինչքչերն են մեծ հանճար-

պատմութեան բեմի վրայ երևում են միայն արդիւնագործական ուժեր, փոխանակութեան ու բաշխման պայմաններ, սեփականատիրական յարաբերութիւններ և այլն: «Մօնիստական» այդ բացարձակութիւնը (միմիայն տնտեսական ֆակտոր), որ տալիս են մի կարգ մարքսիստներ, այսօր իրաւամբ մերժոււմ է մարքսիզմի կրիտիկական շփոթի կողմից, իբրև հակագիտական, իբրև ոչ-համապատասխան պատմական իրականութեան: Ամեն բան պատմութեան մէջ չի վերածուում տնտեսական-արդիւնագործական ուժերի:

Դառնանք Սպենսերին:

Անհնարին է, ասում է նա, պատկերացնել մեզ արտաքին միջավայրի, այդ սկզբնական ֆակտորի, բովանդակ ազդեցութիւնը հեռուոր անցեալի մարդկային համախմբումների վրայ. անհնարին է, քանի որ մենք ոչ մի միջոց չունենք ծանօթանալու այդ հեռուոր անցեալի հետ: Անյիշատակ ժամանակներում, ինչպէս գիտութիւնը վկայում է այսօր, կատարւել են երկրագնդի վրայ գէօլոգիական ահագին փոփոխութիւններ, որոնք փոփոխել, յեղաշրջել են նաև բուսական ու կենդանական աշխարհը (Ֆլօրա ու ֆաունան), — իսկ այդ յեղաշրջումների ճակատագրական հետևանքն են եղել՝ մարդկային զանգւածների մշտնջենաւոր տեղափոխումներ, գաղթականութիւններ, ամբողջ երկրի վրայ:

Կհանրը ընդհանրապէս հնարաւոր է եղել որոշ տաքութեան մէջ, աշխարհագրական որոշ սահմաններում: Առանց այդ պայմանի չէին կարող մի որոշ տեղում գոյութիւն ունենալ ֆլօրան և ֆաունան, կենդանիներ ու բուսականութիւն, իսկ առանց դրանց չէր կարող լինել մարդ-արարած և մարդկային հասարակութիւն:

Ահագին է կլիմաների, օդերի ազդեցութիւնը մարդկանց պարապմունքների ու գործունէութեան վրայ: Օդի չորութիւնը կամ խոնաւութիւնը, ասում է Սպենսեր, ինքնըստինքեան մի կարևոր ֆակտոր է: Փորձը ցոյց է տալիս, որ բոլոր միւս հաւասար պայմաններում՝ աւելի մեծ չափով մարմնային գործունէութիւն կայ այն ժողովուրդների մէջ, որոնք բնակւում են տաք եւ չոր վայրերում, քան թէ նրանց մէջ, որոնք բնակւում են տաք ու խոնաւ տեղերում...

Ոչ պակաս ուժեղ են հողային ու տեղագրական պայմանները: Ոչ անապատները և ոչ էլ լեռնոտ երկիրները չեն տալիս

սովորաբար ամուր կազմակերպւած հասարակութիւններ: Այդ վերջին նպատակի համար անհրաժեշտ է հոծ մասսաների համախմբումը այս կամ այն հզօրի հրամանատարութեան տակ, իսկ այդ դարութեամբ է գլուխ գալիս չոր, ամուր վայրերում: Լեռնայինները մասնաւորապէս, ըմբոստ են լինում, ապրում են կղզիացած, ցիր ու ցան խմբերով. նրանք չեն սիրում հպատակութիւն, սուբօրտինացիա (ստորադրում), որը թէև ինքնին անհամակրելի է, բայց հասարակական էօլիւցիայի մէջ պատկառելի դեր է խաղացել: Այդ տեսակ երկրներում հասարակութիւնների ինտեգրացիան (intégration), նրանց ամբողջացման, ձուլման գործողութիւնը գլուխ չի գալիս:

Այլ բան է այնպիսի վայրերում, ուր հողը կարող է սնուցանել մեծ ազգաբնակութիւն, և ուր նա տալիս է զիւրութիւններ՝ ստորադրելու, կառավարելու մասսաներին, ևս առաւել՝ երբ երկրի այդ բնական հարստութիւնների մէջ կայ բազմազանութիւն (միակերպութիւնը առհասարակ նպաստաւոր չէ հասարակական առաջադիմութեան համար): Նեղոսի հովիտը մեծ սկզբնական քաղաքակրթութեան որրան է եղել հէնց այն պատճառով՝ որ ինքը Նեղոսը իր պարբերական ոռոգումներով հողի անսովոր պարարտացման և բնական անբաւ հարստութիւնների մի անսպառ աղբիւր էր, որ այնտեղ կարելի էր հասնել տնտեսական որոշ բարգաւաճման, գործ զննելով նոյն իսկ նախնական արդիւնաբերութեան միջոցներ:

Որքան մեծ է և բուսականութեան ազդեցութիւնը: Օգտակար բոյսերի բացակայութիւնը կամ ծայրայեղ սակաւութիւնը արգելք է լինում հասարակական պրօգրէսին: Այն ինչ հարուստ ու բազմատեսակ բուսականութիւնը նպաստում է արեւտների առաջադիմութեան, զարգացում է մարդկանց ճարպկութիւնն ու իմացականութիւնը:

Վերջապէս ահագին ֆակտոր է ֆաունան, կենդանիների աշխարհը: Նա որոշում է հասարակութիւնների զարգացման տիպը և աստիճանը, որոշում է նրանց հիմնական պարապմունքները. հասարակական ազրեգատները (համախմբումները) որսորդ են կամ խաշնարած, նայած՝ թէ ինչ տեսակ կենդանիներով են առատ նրանց բնակավայրերը: Հասարակական կեանքի համար մեծ կարևորութիւն ունի նաև ֆասակար կենդանիների գոյու-

թիւնը կամ չգոյութիւնը: Մեծ գիշակերները ու սողունների ծայրայեղ առատութիւնը Հնդկաստանում լուրջ խոչընդոտ է կեանքի նորմալ ընթացքի համար, ինչպէս և ֆրասակար միջատների այն անհելի արշաւանքները, որոնք Աֆրիկայի որոշ վայրերում թունաւորում են և երկրագործի և խաշնարածի կեանքը, ոչնչացնելով հունձերը, պատուհաս դառնալով ընտանի կենդանիների համար:

*
**

Ի՞նչ կարելի է ասել ներքին ֆակտորների կամ մարդ-անհատների մասին: Դարձեալ ահագին դժւարութիւններ կան՝ ուսումնասիրելու նրանց հեռուոր անցեալում: Մնում է դիմել ներկայումս գոյութիւն ունեցող վայրենի ցեղերին և նրանց առանձնալատկութիւնների հիման վրայ մի մտաւոր գաղափար կազմակերպական մարդկութեան մասին:

Նախամարդը, Սպենսերի ենթադրութեամբ, եղել է աւելի փոքրահասակ (քանի որ հասակը, իբրև մի առաւելութիւն գոյութեան կուր մէջ, յետոյ պիտի զարգացած լինի աստիճանաբար) և աւելի թոյլ Ֆիզիքապէս, քան միջին քաղաքակիրթ մարդը: Նրա ստամոքսը և առհասարակ սննդական օրգանները եղել են աւելի մեծ, աւելի զարգացած, քան թէ քաղաքակիրթ մարդունը: Եւ նա համեմատաբար եղել է աւելի դիմացկուն, աւելի համբերատար ամեն տեսակ զրկանքների ու ֆրասակար ազդեցութիւնների հանդէպ: Այդպէս անզգայ ու անտարբեր լինելով դէպի կեանքի հարւածները—նախամարդը առհասարակ շատ քիչ ձգտում է ունեցել բարեփոխութիւն մտցնելու այդ կեանքում:

Զգացմունքների աշխարհը... ոչ այնքան բարդ, ոչ այնքան հարուստ: Սկզբնական մարդը չափազանց դիւրագրգիւ էր, իմպուլսիւ, բոպէի ազդեցութեան ենթակայ, հեշտութեամբ բռնկող: Տրամադրութիւնն ամեն վայրկեան կարող էր փոփոխուել: Կապ, յարակցութիւն, հեռատեսութիւն չը կար գործողութիւնների մէջ և, անտարակոյս, հասարակական խմբային գործողութիւնը խիստ տուժում էր այդ հանգամանքից: Անհատի գործողութիւնները բնազդական էին, ըէֆլեկտիւ և նրանց նպատակը—անմիջական ցանկութիւնների իրագործումը:

Մի բան միայն աչքի է ընկնում—սովորութեան յարատեւութիւնը վայրենիների մէջ: Նախնական մարդը վերին աստիճանի պահպանողական է, նորատեաց, գերի միանգամ ընդմիշտ ընդունած սովորութեան:

Ալտրուիստական զգացումները գրեթէ բացակայում էին. ապացոյց այն բարբարոս վերաբերմունքը, որ ցոյց են տալիս բոլոր վայրենի ցեղերը դէպի կինը,—այն անպատիւ, գրաստային վիճակը, որին ենթակայ է այդ վերջինը:

Ի՞նչ էր ներկայացնում նախամարդու մտաւոր աշխարհը:

Հնդհանուր գաղափարների կատարեալ բացակայութիւն: Երևակայութիւնն էլ—ոչ շատ զարգացած. և այն էլ սոսկ վերջուշական, ոչ ստեղծագործող: Վայրենին սովորաբար մի առարկայ կամ մի երևոյթ դիտելիս կենտրոնացնում է իր ուշադրութիւնը անշան, երկրորդական գծերի վրայ և, ինչպէս յատուկ է բոլոր թոյլ ու խոպանուղեղներին, մոռանում է էական գծերը, որոնց հիման վրայ էլ կարելի է միայն եզրակացութիւն անել իրերի ու երևոյթների մասին: Եւ այդպիսով բոլոր դիտողութիւններից ոչ մի ճշմարիտ միտք չի մնում վայրենու գլխում: Այդ գիծը, ասում է Սպենսեր, ընդհանուր է մարդկային բոլոր ստորին ցեղերին:

Ոչ մի գաղափար, եզրակացնելու, ընդհանրացնելու ոչ մի կարողութիւն: Վայրենին չի նշմարում պատճառականութեան հետքն անգամ շրջապատող երևոյթների մէջ. այդտեղից է առաջանում նրա առասպելական սնահաւատութիւնը, այդ պատճառով է նաև, որ նա առհասարակ չունի սիւրպրիզի, անակնկալի զգացումը. նա անհարցասէր է, անտարբեր նոյնիսկ ամենաանակընկալ նորութիւնների հանդէպ:

Իր «Սօցիօլօգիական սկզբունքների» համարեա ամբողջ առաջին հատորը Սպենսեր ներքում է նախամարդու ուսումնասիրութեան. ոչ մի ուրիշ գիտնական չէ ներկայացրել այնքան իմաստալի մի նախապատմական սօցիօլօգիա: Ծիշտ է, մեր հեղինակը աշխարհաշրջիկ ճանապարհորդութիւններ չէ արել, ինչպէս Տայլօր, Լըբբօկ, Մաքս-Միլլէր և այլն, նա միմիայն շահագործել, սիստեմի է վերածել նրանց տւած վկայութիւնները վայրենիների մասին. նա կառուցել է սօցիօլօգիայի շէնքը իր առանձնատեսակում... Այդ զարմանալի մարդը բիօլօգիական դիտողութիւններով

ևս (կենդանաբանութեամբ, սաղմագիտութեամբ, ֆիզիոլոգիայով և այլն) երբէք մասնագիտօրէն չէ զբաղել, նա երբէք չէ աշխատել լաբօրատօրիաներում և այնուամենայնիւ, նրա դիտողութիւնները այդ բաժիններում դեռ այսօր ևս մեծ արժէք են ներկայացնում գիտական աշխարհին:

Ուշի ուշով և տարածութեան վրայ դիտում է Սպենսերը վայրենիներին, քննում է նրանց՝ իրանց ֆիզիքական, մտաւոր ու հոգեկան արտայայտութիւնների մէջ. և այդ նախնական բնութեանց յատկութիւններով նա բացատրում է վայրենի ցեղերի մէջ գոյութիւն ունեցող հասարակական հաստատութիւնները, որոնք յետոյ, պատմութեան ընթացքում աստիճանաբար զարգացել են էւոլիւցիայի օրէնքների համեմատ:

Նախ անհատներին է նա ուսումնասիրում, հասարակական այդ «միաւորներին» իրանց բոլոր կողմերով, ապա և քննում է այն երևոյթները, որոնք բղխում են այդ միաւորների փոխազարձ շփումից, նրանց համերաշխ գործակցութիւնից:

Ո՛րքան բարդ ու բազմազան են այդ երևոյթները... Ընտանեկան կազմակերպութիւն, քաղաքական կազմակերպութիւն, կրօնական-կղերական կազմակերպութիւն, լեզու, արւեստ, գիտութիւն և այլն—հասարակական կեանքի այդ բոլոր տարրերը ազդում ու փոխազդում են յաւիտենապէս, և սօցիօլօգայի նպատակներին մինն է՝ ցոյց տալ, թէ ինչպէս այդ անվերջ այլազանութիւնից առաջ է գալիս մի ներդաշնակ ամբողջութիւն, որ մենք անւանում ենք հասարակութիւն:

Ի՞նչ է մարդկային հասարակութիւնը...

Սպենսեր պատասխանում է, որ դա անհատների մի աղբյատ է (agregat, շիջակոյտ), բայց ոչ պատահական, առանց յարակցութեան ու յարատւութեան: Հասարակութիւնը մի կօնկրիտ էակ է, որ ապրում է ամբողջ սերունդներ ու նոյնիսկ դարեր շարունակ: Նա մի կենդանի իրականութիւն է, մի մարմին, օրգանիզմ, նման բիօլօգիական օրգանիզմներին:

Եւ Սպենսեր երկարօրէն համեմատում է երկու հասկացութիւնները, հասարակութիւնը և օրգանիզմը սահմանում է նրանց մէջ բազմաթիւ նմանութիւններ, անալօգիաներ:

Հասարակութեան և օրգանիզմի նմանութեան գաղափարը պատկանում է իսկապէս ֆրանսիացի Օգիւստ Կօնտին, որ առա-

ջին անգամը մտքեց սօցիօլօգիան գիտութիւնների շարքը, իբրև ինքնուրոյն մասնագիտութիւն:

Սպենսերը տւեց այդ գաղափարին ընդարձակ զարգացում և կիրառութիւն: Հասարակութիւնը օրգանիզմ է, ասում է նա և օրգանիզմն էլ հասարակութիւն է: Մարդուց սկսած մինչև անասնական սանդուղքի ամենաստորին աստիճանները՝ կենդանի էակները ներկայանում են մեզ բարդ ազդեցատների ձևով, կազմւած անհամար բջիջ-անհատներից ու օրգաններից: Այդպէս է ուսուցանում Վիրխովի հուշակաւոր բջիջային թէօրիան:

Որտե՞ղ են սակայն նմանութիւնները, ի՞նչ առնչութիւն կայ մի մարդկային հասարակութեան և մի կենդանու կամ մարդու միջև:

Սպենսեր պատասխանում է, որ երկուսն էլ ածում են, թէ հասարակութիւնը և թէ անհատական (մարդու կամ կենդանու) օրգանիզմը: Եւ աստիճանաբար աճելով՝ երկուսն էլ ստանում են միշտ աւելի ու աւելի կատարեալ կերպարանք:

«Ստորին կարգի մի էակ կամ բարձր կենդանու մի սաղմ գրեթէ բոլորովին հօմօթէն է, միապաղաղ, բայց նրա զանգւածը աստիճանաբար աւելանալով՝ նրա մասերը դառնում են միշտ աւելի բազմաթիւ և աւելի որոշ: Չէ՞ որ, ասում է Սպենսեր, նոյն երևոյթը նկատելի է և մարդկային հասարակութեան մէջ. նա էլ արտայայտում է երկու միաժամանակ կատարւող շարժումները— ամբողջացում և զանազանւորում (intégration, différenciation):»

«Գրեթէ բոլորովին հօմօթէն, քանի դեռ փոքրիկ է, հասարակութիւնն աճելով ու ծաւաւելով՝ արտադրում է բաժանումներ ու ենթաբաժանումներ միշտ աւելի բազմաթիւ և աւելի շեշտւած: Եւ երբ գալիս է նրա կատարեալ հասունութեան շրջանը, նա սկսում է կազմալուծւել...»

«Թէ մարդկային հասարակութեան և թէ անհատական օրգանիզմի մէջ, որքան աւելի է բարդանում կազմը, այնքան աւելի են բազմանում պաշտօնները, ֆունկցիաները: Ամենաստորին լի են բազմանում պաշտօնները, ոչ ստամոքս, ոչ շնչառութեան օրգաններ, կարգի կենդանին չունի ոչ ստամոքս, ոչ շնչառութեան օրգաններ, ոչ անդամներ. նա կատարում է իր բոլոր պաշտօնները իր մարմնի բոլոր մասերով: Չը կայ ֆիզիօլօգիական աշխատանքի բաժանում, ոչ ինչ է նոյնպէս մարմնի մասերի փոխաժարձ կախումը:»

Բարձր կենդանու մէջ, ընդհակառակը, օրգանները բազմաթիւ են, պաշտօնները որոշւած, իրարու ստորադրւած, իրարից կախւած»:

Նման երևոյթներ և հասարակութեան մէջ: Նախնական վայրենի մարդկային համայնքներում գրեթէ չըկայ աշխատանքի բաժանում: Ամեն մի անդամ ինքն է գոհացնում իր կարիքները. նա և որսորդ է, և զինուոր-ազգմիկ, և իր տունն ու գործիքները շինող... Բայց ժամանակի ընթացքում համայնքը հետզհետէ զարգանալով՝ աշխատանքը բաժանուում է, մասնաւորուում, պաշտօնները բազմա-նում են ու որոշում:

Ուրիշ բազմաթիւ նմանութիւններ ևս. օրինակ, ջլային սիստեմը անհատական օրգանիզմում համապատասխանում է զինուորական կառավարութեանը՝ հասարակութեան մէջ: Արիւնատար անօթները համապատասխանում են ճանապարհներին ու երկաթուղիներին՝ բարձր քաղաքակիրթ հասարակութիւնների մէջ և այլն և այլն:

* * *

Սպենսերը շատ յարձակումներ կրեց իր այդ «օրգանական թէօրիայի» առիթով: Նրա սահմանած անալոգիաները մեծ մասամբ արհեստական են, կամայական: Թէօրիան ունի ընդարձակ գրականութիւն և շատ ուրիշ ակնաւոր ներկայացուցիչներ, Շէֆլէ, Լիլիէնֆէլդ, Վօրմս և այլն: Ոմանք Սպենսերից աւելի հեռու են գնում և համարեա նոյնացնում են հասարակական ու անհատական օրգանիզմները:

Շէֆլէ, որ մեռաւ գրեթէ Սպենսերի հետ միաժամանակ, գրել է մի ընդարձակ ու հեղինակաւոր աշխատութիւն «Հասարակական մարմնի կազմն ու կեանքը» բնորոշ վերնագրով (Bau und Leben des sozialen Körpers), ուր նա մանրամասնօրէն ներկայացնում է մարդկային հասարակութեան անալոգիան, ֆիզիօլոգիան և հոգեբանութիւնը:

Այդտեղ հասարակական այլ և այլ հաստատութիւնները նմանեցնում են անհատ մարմնի օրգաններին, մարդիկ ու ապրանքները (աշխատանքի արդիւնքները) նմանեցնում են հիւսւածքներին, ընտանիքը՝ օրգանական բջիջին, մարդկային մկանները՝ հասարակութեան ուժին ու գեղարւեստին և այլն:

Ո՛չ, յարատե ժողովրդականութիւն չունեցան և չէին կարող ունենալ անալոգիայի այդ փորձերը: Իրանք իսկ հեղինակները ի

վերջոյ խոստովանեցին նրանց կամայական ու խախուտ լինելը: Մարդկային հասարակութիւնը մի մարմին է, ի հարկէ, բայց նա նման չէ կենդանական մարմնին: Անասնութեան շարունակութիւնը լինելով հանդերձ՝ մարդկութիւնը ներկայացնում է իրանից մի տարբեր աշխարհ, իր տարբեր յատուկ արտայայտութիւններով:

Թէպէտև բարձր կենդանիների ու նոյնիսկ մարդու հոգեկան արտայայտութիւնները վերջին քննութեան մէջ վերածւում են զուտ կենսական, ֆիզիօլոգիական հակումներին, պրոտօպլազմի մութ, անորոշ գրգիռներին, այնուամենայնիւ, մարդու հոգեկան աշխարհը այնքան մեծ բարդութիւն ունի, այնքան բնորոշ բովանդակութիւն, մարդկային հոգեկան արտայայտութիւնները այնքան հեռու են պրոտօպլազմի զուտ օրգանական պահանջներից, որ կարելի է ասել, թէ մօնէրից մինչև մարդը մի անանցանելի խորխորատ կայ, որ այդտեղ տարբերութիւնը լոկ քանակի ու աստիճանի մէջ չէ, այլ և որակի և էութեան մէջ:

Մարդկային հասարակութիւնը, ուրեմն, կենդանական մի պետութիւն չէ, այլ մի տեսակ գերօրգանիզմ (superorganisme): Եւ սօցիօլոգիան լոկ բիօլոգիայի ձիւղաւորութիւնը չէ, այլ մի նոր, բարձր գիտութիւն, գերօրգանիզմի գիտութիւնը:

Սպենսերը ևս չէ թագցնում, որ կայ «ծայրայեղ տարբերութիւն» մի հասարակութեան և մի օրգանիզմի միջև: Եւ ասում է՝ ինչու: «Կենդանու մասերը կազմում են մի կօնկրեա ամբողջութիւն, այն ինչ մարդկային հասարակութիւնը մի տարրորոշ, անջատ (discret) ամբողջութիւն է»:

Մի տեղ բաղադրիչ տարրերը շղթայաւած են իրար, միւս տեղ—հասարակութեան մէջ—այդ տարրերը ցրւած են ազատ: Կայ մի աւելի ցայտուն տարբերութիւն. կենդանու կամ մարդու մօտ, ասում է Սպենսեր, գիտակցութիւնը կենտրոնացած է մարմնի մի փոքրիկ մասի մէջ,—միւս մասերը մօտաւորապէս զուրկ են նրանից: Մինչդեռ հասարակութեան մէջ նա տարածւած է ամեն տեղ...

Ձի կարելի համեմատել հասարակական օրգանիզմը, որ ցրւած է, անհամաչափ և գիտակից իր բոլոր միաւորների մէջ, —չի կարելի համեմատել նրան անհատական օրգանիզմների որևէ տիպի հետ: Միակ ընդհանուր կէտը, որ կայ նրանց մէջ,

այդ այն է՝ որ կազմակերպութեան հիմնական սկզբունքները ընդհանուր են մէկին և միւսին:

Սպենսերի սովորաբար պայծառ միտքը դժւար կացութեան մէջ է դնում ընթերցողին իր այդ հակասական յայտնութիւններով: Նման, բայց և «ծայրայեղ տարբեր»... Զարմանում էք, ինչո՞ւ է նա այնքան երկար ծանրանում նմանութիւնների վրայ, ինչո՞ւ է երկու օրգանիզմի անալոգիան այնքան մեծ դեր խաղում սպենսերեան սօցիօլոգիայի մէջ:

*
* *

Անալոգիայի փաստով յափշտակած՝ անհատական օրգանիզմների նման, հասարակական օրգանիզմի մէջ ևս կայ արտաքին օրգանների մի սիստեմ, որը յարաբերութեան մէջ է դրսի հետ, պաշտպանելու և յարձակելու կոչումով՝ և կայ ներքին օրգանների մի սիստեմ, որը ապահովում է հասարակական մարմնի սննդառութիւնը:

Նայած թէ որն է երկու սիստեմներից գերակշռողը՝ հասարակութիւնը կա՞ գլխաւորապէս զինւորական է, հիմնած բռնի գործակցութեան վրայ (Coopération forcée), կամ թէ գլխաւորապէս ինդուստրիական, հիմնած կամաւոր գործակցութեան վրայ:

Էւլիլեցիան, որ Սպենսերի մօտ նոյնանման է առաջադիմութեան, «պրօգրէսի» հետ, գոյութեան կռիւը, բնական ընտրութիւնը «առաջ են բերել նախ զինւորականութեան, միլիտարիզմի զարգացումը և կառավարութիւնները, բայց նրանք արդէն բերում են մեզ և պիտի բերեն միշտ աւելի ու աւելի, ճակատագրական անհրաժեշտութեամբ, ինդուստրիալիզմ և լիբերալիզմի զարգացումը»: Վերջինը Սպենսերի կարծիքով անբաժան կապւած է ինդուստրիայի առաջադիմութեան հետ:

Այս թէօրիան կազմում է կենտրոնը սպենսերական սօցիօլոգիայի: Նրանից բղխում են բոլոր միւս թէօրիաները, որ Սպենսեր տալիս է քաղաքական, տնտեսական, կրօնական, ընտանեկան էւլիլեցիայի մասին: Նա ցոյց է տալիս, թէ ինչպէս ինդուստրիալիզմի զարգացման շնորհիւ՝ քաղաքական էւլիլեցիան ձգտում է միշտ դէպի քաղաքական ազատութիւն, տնտեսական էւլիլեցիան՝ դէպի առևտրի ու աշխատանքի ազատութիւն,

կրօնական էւլիլեցիան՝ դէպի խղճի ազատութիւն, ընտանիքի էւլիլեցիան՝՝դէպի կանանց և երեխաների իրաւունքի ճանաչումն ու ազատութիւնը:

IV.

ԳՈՅՈՒԹԵԱՆ ԿՈՒԻՒ ԹԷՕՐԻԱՆ ՍՕՑԻՕԼՕԳԻԱՅԻ ՄԷՉ

Օրեկսիլիզմը՝ իբրև սօցիօլոգի անհրաժեշտ յասկանիւ.—«Ինչ որ իրական է, բանաւոր է».—Վարենիների մէջ.—Ո՞ր է պրօգրէսը.—Ընտրողսին գոյութեան կոչում.—Պատերազմի դեր.—Ինչպէ՞ս են մարդիկ կառավարել հնում.—Նախնական հօրգան և ստիսնանական զանգանաւորումը.—Համասարից դէպի պլյուսարը:

Սօցիօլոգը, Սպենսերի կարծիքով, պէտք է ազատ լինի զգացումների տիրապետութիւնից, — մարդկային պատմութեան գրական երևոյթները նա պիտի հետազօտէ պարզ, անխռով հանդարտութեամբ, առանց հրճանքի և առանց ցասումի:

Ամենագարշելի իրողութիւններն անգամ իրանց տեղն ունին տիեզերական էւլիլեցիայի մէջ, — և՛ նախամարդու կոշտ ու գոհնիկ սնապաշտութիւնը, որ ընդունակ է մեր երեխաների ծիծաղը շարժել, և՛ համատարած մարդակերութիւնը, որ սրբագործւում էր յաճախ կրօնական հաւատալիքներով, և՛ գերութիւնը, որ ենթարկում էր միլիոնաւոր մարդկանց զազիր, անպատիւ, անասնական դրութեան, և՛ այն արիւնալի պատերազմներն ու հեկատօմքները, որոնք լցնում են մարդկային պատմութիւնը, և՛ այն վիթխարի պիրամիդները, կազմած բիւրաւոր զոհերի գանգերից, որ բռնաւորները ի ցոյց էին դնում վաղեմի դարերում, իբրև յաղթութեան զժողային կոթողներ, և այլն այլն...

«Ինչ որ իրական է, խելացի է», Was wirklich ist, ist Wernünftig — ասել է Հեգելը, ասում է և Սպենսեր...

Դաժան, անհեթեթ է հնչում այդ Ֆրազը, բայց նա, դժբախտաբար, պատմական ճշմարտութեան արտայայտութիւն է, և մենք ստիպւած ենք համակերպել մտքի երկու տիտաններին, ուրոնք երկուսն էլ օրեկտիւ մտածողութեան ամենահզօր ներկայացուցիչներն են:

Հասարակական ընդհանուր էւլիլեցիայի տեսակէտից կարող է համարւել բարոյական ու օգտակար այն՝ ինչ որ ընթա-

ցիկ մօրալի տեսակէտից դատապարտուում է իբրև բացարձակ անբարոյականութիւն, իբրև չարիք: Եւ ընդհակառակը. հասարակութիւնների առաջադիմութեան ու բարգաւաճման համար նրանց զարգացման որոշ շրջաններում—կարող են չարիք լինել այն յատկութիւնները, որոնք հռչակուում են ժամանակակից էտիկայի կողմից, որպէս գերագոյն առաքինութիւններ:

Ո՞րն է արդեօք գերադասելի՝ խաղաղասիրութիւնը, թէ ուղղմական ու գիշատիչ հակումները: Ո՞րն է բարիք և ո՞րն է չարիք...

Իզէալական բարոյախօսութեան համար պատասխանը պարզ է. իսկ սօցիօլօգի համար՝ նա պայմանաւորուում է այլ և այլ հանգամանքներով: Բարիք է կամ չարիք, նայած տեղին և ժամանակին... Եթէ բովանդակ մարդկութիւնը հասած լինէր Սպենսերի երազած «ինդուստրիական» (արդիւնաբերական) շրջանին, տարակոյս չըկայ, որ խաղաղասիրութեան զգացումը կը լինէր զուտ առաքինութիւն, այն ինչ ռազմատենչ հակումները պիտի ժխտէին, որպէս հակասօցիալական մի պատուհաս, որպէս անէծք: Սակայն մի շրջանում, ուր գոյութեան կոիւր տակաւին օրէնք է, ուր ֆիզիքական գիմարութեան ուժը ամենաէական պայմաններից մէկն է ժողովուրդների յարատուութեան ու նօքմալ, անսայթաք առաջադիմութեան, — մի այդպիսի շրջանում եկէք ու ներբողեցէք խաղաղասիրութիւնը, եկէք ու դատապարտեցէք ռազմական հակումները... Առաջինը, իր չափազանցութեան մէջ, յայտնուում է որպէս չարիք, երկրորդը, իր չափաւորութեան մէջ, յայտնուում է որպէս բարիք: Անդարձ կորստեան վիհն են նետուում այն ժողովուրդները, որոնք զեկավարուում են քրիստոնէական խոնարհութեան հրահանգներով և արհամարհում են կուրդիմարութեան, ինքնապաշտպանութեան պահանջները: Անդարձ կը մարէ անգամ ամենախելօք, ամենաառաջադէմ ժողովրդի աստղը, եթէ խաղաղասիրութեան ու ալտրուիզմի, այլասիրութեան հետ՝ նա չի դաւանի ռազմասիրութեան ու էգօիզմի աւետարանը. չին, տարածւած ճշմարտութիւններ, որոնք ցոլում են համաշխարհային էլօլիւցիայի զգաստ, օրեկտիւ ուսումնասիրութիւնից...

Բարոյական սկզբունքները, Սպենսերի կարծիքով, քաղաքակրթութեան առաջադիմութեան աստիճանաչափ չեն, կան վայրենի, բիրտ համայնքներ, որոնք իրանց ազնիւ հակումներով

կարող են ամօթահար անել քաղաքակիրթ մարդուն: Հնդկաստանում կան ցիբուցան բեկորներ նախնական ցեղերի, որոնց մէջ ճշմարտախօսութիւնն ու շիտակութիւնը օրգանական յատկութիւններ են: Նրանք այդ կողմից աւելի բարձր են, քան իրանց հարեան ինդուսները—որոնք անհամեմատ աւելի զարգացած են և արդէն որոշ քաղաքակրթութեան տէր—նրանք բարձր են նոյն իսկ եւրօպացիներից:

Ուրիշ քաղմաթիւ վայրենի ցեղերի մէջ ևս, մանաւանդ լեռնականների աշխարհում, միսիօնարների ու ճանապարհորդ-գիտնականների վկայութեամբ, ծաղկում են ամենաբարձր առաքինութիւնները՝ շիտակութիւնը, ալտրուիզմն ու պատուասիրութիւնը և արհամարհում են՝ կեղծիքը, սուտը, գողութիւնը և այլն:

Մի քանի աստիճան վեր բարձրացէք քաղաքակրթութեան սանդուղքի վրայով և մտէք ամերիկական ֆիջիների մէջ, որոնք անգրագէտ ցեղերի աշխարհում համարուում են ամենախելացին, — ունեն քաղաքական կազմակերպութիւն, զինւորական կարգեր, երկրագործութիւն, նաւարկութիւն և այլն: Սյգտեղ դուք կը տեսնէք մի բոլորովին ջոկ պատկեր. սուտը, կեղծիքը, դաւաճանութիւնն ու մարդասպանութիւնը նւիրագործւած օրէնքներ են. երեխաներին յաճախ կոտորում են, հիւանդներին խեղդած են անում, կենդանի մարդկանց յօշոտում են, լափում:

Մի աստիճան ևս վեր բարձրացէք ու մտէք ամերիկական դահօմէների աշխարհը: Քաղաքակրթութիւնը մի քայլ առաջ է. աշխատանքի բաժանումը աւելի է զարգացած, հասարակական դասակարգերը՝ աւելի բազմաթիւ. կանոնաւոր զօրք, օրէնքներ բանտեր, ոստիկանութիւն: Սակայն այդ բոլորը ունենալով հանդերձ՝ դահօմէների հայրենիքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կազմակերպւած մի ոճրանոց: Պատերազմներ են մղում միմիայն նրա համար, որ ձեռք բերեն մարդկային գանգեր արքայական պալատները զարդարելու համար: Հարիւրաւոր հպատակներ են մորթուում, երբ մեռնում է թագաւորը և ուրիշ հարիւրաւորները ուղարկուում են նրա ետեւից իւրաքանչիւր տարի: Արիւնարբու և ստախօս, մարդկային ամեն արժանաւորութիւնից զուրկ՝ դահօմէները նոյնպիսի

գազաններ են իրանց հարազատների՝ ծնողների ու զաւակների, բոյրերի ու եղբայրների դիմաց:

Շարունակելով մեր ճանապարհը դէպի նորագոյն քաղաքակրթութեան որրանները, ամեն տեղ մենք ականատես կը լինենք նման բարբարոս տեսարանների: Ասորեստանի կոտորածներն ու գերի բռնաւճների կլասիկ դարձած չարչարանքները, Եգիպտոսի թագաւորների խժդուութիւնները, Հռովմի դարաւոր ողբերգութիւնը, գլադիատորական, սոււերամարտական արիւնոտ նախճիրներով, Նեքրոնների ու Ատտիլանների հեղինակած արհաւիրքները, միջնադարեան քրիստոնէայ եւրոպայի ամբողջ պատմութիւնը՝ իր ինկւրիզիտիւսով, հաւատաքննութեամբ ու մասսային ջարդերով, վերջապէս, նորագոյն շրջանը՝ իրան յատուկ սարսափներով, գիւանագիտութեան և գաղութային քաղաքականութեան աշխարհագրորդ ոճիւրներն—այդ բոլորը դժւար թէ նսեմանայ դահամէների և ֆիջիների գազանութիւնների առջև...

Ո՛ր պիտի հակապատկեր, բարոյական տեսակէտից որքան անագին տարրերութիւն այդ մեծ ցեղերի և մարդկային այն բիրտ, ստոր, նախնական համայքների միջև, որոնց մասին քիչ առաջ խօսեցինք, որոնք գրեթէ հօրդայական վիճակում ցիրուցան բնակուում են Հնդկաստանի մէջ, որոնց աշխարհում ծաղկում են բարոյական առաքինութիւնները, ալտրուիզմը, մարդասիրութիւնը, արդարութիւնն ու շիտակութիւնը...

Եւ այնուամենայնիւ, չենք կարող ասել, թէ այդ վերջինները աւելի բարձր են, կուլտուրայի տեսակէտից աւելի առաջացած, քան եւրոպական մարդկութիւնը, քան հռովմէական բռնապետութիւնը, քան նոյնիսկ Եգիպտոսը, Ասորեստանը: Չենք կարող երանի տալ նախնի այն ցեղերին, թէկուզ և բարոյական ու առաքինի, չենք կարող ցանկանալ, որ մարդկութիւնը յաւիտեան դեզերէք այնպիսի պրիմիտիւ, հօրդայական վիճակում, ուր մարդկային համախմբումները՝ անձար ու անօգնական՝ առանց որևէ հասարակական կազմակերպութեան, առանց գէնքերի ու արդիւնաբերական մշակած գործիքների՝ թափառէին նախիրների պէս ազատ բնութեան մէջ, մատնւած գիշատիչների յարձակումներին և բնութեան քմահաճ խաղերին...

Ո՛ւր է «պրօգրէսը»... էլ ո՛ւր է, սակայն, քաղաքակրթութիւնը, եթէ Մէյլանի գոնհիկ վէրգաները և Հնդկաստանի ման-

ջիկ հօրդաները իրանց մեղծ ու մարդասէր բարոյականութեամբ աւելի բարձր են, քան թէ բարձր ու կազմակերպւած ազգութիւնների անդամները, քան մեծ պետութիւնների, Եգիպտոսի ու Արևմուտքի քաղաքացիները, որոնք դարերով մշակել են քաղաքակրթութիւն, կանգնեցրել են արւեստի և գիտութեան հոյակապ արձաններ...

Ո՛ւր է «պրօգրէսը»:

Հասարակական գիտութեան կնճառոտ ու փափուկ հարցերից մէկն է դա, որին Սպենսեր պատասխանում է դարձեալ անալօգիայով, նմանութեան օրէնքով: Նա օրինակ է բերում շնչաւոր բնութիւնը և ներբողում է կուբ սկզբունքը, որը թէև դաժան, անողորմ ու աւերիչ, բայց կազմակերպող ու աշխարհաշէն է, առաջադիմութեան մի գրաւական, պրօգրէսի մի խթան:

Անասնական աշխարհում, ասում է նա, գոյութեան կռիւը համատարած երևոյթ է և նա է էւօլիւցիայի գործօնը, մղիչը: Մրցման շնորհիւ, անասնական ամեն մի տեսակի մէջ առաջ են գալիս ամենաձարպիկ կամ ուժեղ անհատները, մշակում է բարձրագոյն տիպը: Մրցման շնորհիւ, այլ և այլ տեսակների մէջ զարգանում են այլ և այլ խոշոր առանձնայատկութիւններ. ուրոնցով նրանք յարմարում են իրանց միջավայրին և յարատեւում են (La survivance des plus aptes): Առանց այդ անողորմ բընաջնող կուբ՝ չէին զարգանայ կենդանիների և տեսակների բազմաթիւ օրգաններն ու ֆունկցիաները, նրանց անդամներն ու զգայարանները:

Ամեն մի պրօգրէս, որ կատարւում է այս կամ այն անասնական տեսակի մէջ՝ ուժի, ճարպիկութեան, ճկունութեան տեսակէտից՝ առաջ է բերում միւս. մրցակից տեսակների մէջ ևս նոյնանման ընդունակութիւններ... Մէկը յուսահատ ճիգ է գործ դնում բռնելու որսը, միւսը ճգնում է խոյս տալ հալածողի ճիրաններից... Առանց այդ յաւիտենական, յուսահատ ճիգերի՝ պրօգրէս չէր լինի անասնական աշխարհում: Առանց այդ տւերիչ ու արիւնահեղ կռիւների՝ պրօգրէս չէր լինի և մարդկային աշխարհում... Կուբ միջոցով է, որ նախապատմական մանրիկ համախմբումները հետզհետէ միացել են և կազմել ընդարձակ մարդկային համայնքներ. կուբ շնորհիւ է, որ ծնունդ է առել հասարակական գործակցութիւնը (Coopération sociale), համերաշխութիւնը

միևնոյն համայնքի, միևնոյն ցեղի, միևնոյն ազգի և միևնոյն պետութեան անդամների մէջ: Մարդիկ նախ և առաջ մտածել են կազմել միահամուռ յարձակման ու պաշտպանութեան սխտեմ, որից և առջացել են ժամանակի ընթացքում հասարակական գործակցութեան այլազան ձևերը:

«Անտարակոյս, ասում է Սպենսեր, չէ կար' լի արդարացնել տիեզերական այդ անտազօնիզմի պատճառած սարսափները. — անտազօնիզմ՝ որ սկսւելով տաս հազար տարի սրանից առաջ համայնքների մշտնջենաւոր ընդհարումներով՝ յանգել է մեծ ազգերի մեծ պատերազմներին: Պէտք է սակայն խոստովանել, որ առանց այդ սարսափների՝ աշխարհը տակաւին բնակւած կը լինէր միայն թոյլ տիպի մարդկանցով, որոնք կը փնտուէին իրանց ապաստանը քարանձաւներում և կը կերակրէին գարշ նիւթերով*):»

Սակայն Սպենսերը անուղղակի յոռետես ֆատալիստներից չէ: «Գոյութեան կռիւը» հասարակութիւնների մէջ լինելով միևնոյն օրս անհրաժեշտ պայման էօլոլիցիայի՝ յաւիտենապէս չբարտի պահպանել իր կոշտ ու վայրագ բնաւորութիւնը:

Մենք խոստովանում ենք, որ պատերազմներին ենք պարտական՝ մեծ հասարակութիւնների առաջացումը և նրանց օրգանների զարգացումը, բայց մենք կարող ենք եզրակացնել, որ ձեռք բերւած ուժերը, որոնք կիրարկւում են այժմ ուրիշ հասարակական ֆունկցիաների համար, յետոյ պիտի կորցնեն իրանց նախնական դերը: Մենք ընդունում ենք, որ առանց այդ յարատև, արիւնոտ կռիւների՝ քաղաքակիրթ հասարակութիւնները չէին կազմակերպւել և որ կռիւ այդ վիճակը պէտք է անհրաժեշտաբար ունենայ իբրև լրացուցիչ՝ մարդու բնաւորութեան համապատասխան ձև—նոյնքան անգթութիւն, որքան եւ խելք: Բայց դրա հետ միասին իրաւունք ունենք պնդելու, որ այդ հասարակութիւնները կազմակերպւելուց յետոյ՝ նրանց բնաւորութեան վայրագութիւնը — անհրաժեշտ պայմանը այդ կազմակերպման պրօցէսի—պիտի չքանայ... Այդ շրջանի ծնունդ՝ հասարակական և անհատական շարիքները աստիճանաբար պիտի նւազին ու անհետանան: Այդպէս ուրեմն, երբ մենք քննում ենք որևէ հասարակութեան կազմն ու ֆունկցիաները էօլոլիցիայի տեսակէտից, կարող ենք պահպանել հո-

*) Principes de Sociologie.

գու անդորրութիւն, որ անհրաժեշտ է՝ գիտական մեկնութիւն տալու համար.— և այդպէս վարւելով, մենք դարձեալ ընդունակ կը լինենք ունենալու բարոյական դրաւորումի կամ պարսաւանքի զարգացումը» *):

* * *

Տեսնենք այժմ, թէ ինչպէս է ընթացել խոշոր գծերով մարդկութեան քաղաքական էօլոլիցիան, ըստ Սպենսերի:

Մարդկային հասարակութիւնները իրանց սկզբնաւորութեան շրջանի մէջ նման էին իրար, ինչպէս նման էին և կենդանական մարմինները բիօլօգիական զարգացման արշալոյսին: Անալօգիան այստեղ ևս, Սպենսերի կարծիքով, աչքի է զարնում երկու կարգի օրգանիզմների մէջ: Ինչպէս որ ներկայիս բոլոր այլազան կենդանիները ծնունդ են առել մէկ կամ մի քանի պարզ, նախնական տեսակներից, այնպէս և այժմեան հասարակական բարդ մարմինները առաջացել են մէկ սկզբնական, պարզ կազմակերպութիւնեց: Այլազանութիւնը յետոյ է եկել, պատմական դարաւոր էօլոլիցիայի ընթացքում:

էօլոլիցիայի չուկէտը՝ միևնոյն հօրդան է, որի մասին խօսեցինք նախորդ յօդւածում: Ինչպէս էր այդ պարզ, նախնական համայնքը վճռում իր կենսական խնդիրները,—տեղափոխութիւն մի վայրից միւսը, հաւաքական պաշտպանութիւն թշնամու հանդէպ, հաւաքական յարձակում և այլն:

Սպենսեր այդ հարցին պատասխանում է a priori, ենթադրութիւններով: Ժողովներ էին կազմւում և հօրդան, ամենայն հաւանականութեամբ, բաժանւում էր երկու մասի. մի կողմից՝ ծերերը, ամենից ուժեղները և ամենից խելօք ձանաչւածները. դա ղեկավարող փոքրամասնութիւնն էր, որ մասնակցում էր վիճաբանութեան: Միւս կողմից՝ երիտասարդները, բոլոր թոյլերն ու անփորձները. դրանք էլ կազմում էին հօրդայի մեծ մասը և սոսկ ունկնդրի դեր էին կատարում, երբեմնապէս իրանց յօժարութիւնը կամ մերժումը արտայայտելով:

Ղեկավարող փոքրամասնութեան մէջ՝ կը լինի միշտ մէկը,

*) Principes de Sociologie.

որ աչքի կը զարնէ իր հեղինակութեամբ,—մի ծեր որսորդ, մի հոչակած ռազմիկ, մի հմուտ կախարդ և այլն: Նրա ազդեցութիւնը կը գերակռէ և նա իր կամքը կը թելադրէ ամբողջ համայնքին: Այդպէս է եղել հաւանականօրէն: Եւ այդպիսով, նախնական մարդկային համայնքի մէջ հետզհետէ գոյացել են կրօն տարբեր մասեր, բիօլօգիական արտայայտութեամբ՝ սկզբնական պարզ զանգածը ենթարկելով դիֆֆերենցիացիայի, զանազանաւորման, ծնունդ է տուել մէկ կորրիդի (noyau) և մէկ նիւլլէօլի:

Քաղաքական կազմակերպութեան այդ սաղմերը առաջ են եկել բոլոր նախնական ժողովուրդների մէջ՝ կրկնութիւնները ամբարայնել են նրանց, դարձրել են կանոն:

A priori ընդունւած այդ դրութիւնը հաստատուում է a posteriori: Ներկայումս գոյութիւն ունեցող այլ և այլ վայրերի ցեղերը տալիս են մեզ այդ նոյն կարգերի նմուշները: Ճանապարհորդ Սմիտի վկայութեամբ՝ աւստրալիական Վիկտորիայի ազգաբնակչութեան մէջ, երբ մի ցեղ պատրաստուում է իր մի անդամի սպանութեան համար վրէժխնդիր լինել հակառակորդ ցեղից,—նա գումարում է խորհրդաժողով, բաղկացած բոլոր ծերերից: Կանայք շրջան են կազմում տղամարդկանց չորս կողմը, և առաջնորդը—ամենահեղինակաւոր ու ազդեցիկ վարենին—բաց է անում ժողովը...

Պարլամենտի նահապետական ձևն է դա, որ գիտում ենք Ամերիկայի շատ վայրերում, Հնդկաստանի լեռնականների մէջ և ուրիշ տեղեր: Ամենակարևոր խնդիրները վճռում են ժողովրդական համագումարում, ժողովրդի համաձայնութեամբ: Այդ նոյն կարգերի ներկայացուցիչ էր հօմերական ժամանակների յունական Ագորան,—մի խորհուրդ, ուր ժողովրդի պարագլուխները թագաւորի նախագահութեան տակ, խորհրդակցում էին հասարակական ծանրակշիռ գործերի մասին, և թագաւորի դերը սահմանափակում էր նրանով, որ ակամջ էր դնում և յայտնում էր իր հաւանութիւնը: Ժողովուրդը շարում էր պարագլուխների շուրջը և միշտ կրաւորական հանդիսատեսի դեր չէր կատարում:

Նոյնպէս հոմէական պատմութեան սկզբնական ժամանակներում, ծանրակշիռ պարագաների մէջ թագաւորը հաղորդում էր իր առաջարկները համախմբւած քաղաքացիներին, որոնք յայտնում էին իրանց մերժումը կամ հաւանութիւնը:

Հուշակաւոր պատմագիր Տակիտոսի ասելով՝ նախնի գերմանների մէջ ևս տիրապետում էին այդ կարգերը: Առաջնորդները ընտոււմ էին իրանց մէջ աննշան հարցերը, իսկ նշանաւորները զբաղեցնում էին ամբողջ ժողովրդին: Այն խնդիրները, որոնց վերջնական վճռի իրաւունքը պատկանում էր ժողովրդին, ընտուլթեան էին ենթարկուում պարագլուխների կողմից. այնուհետև թագաւորն էր խօսում, որը իր տարիքով, զինւորական հմայքով կամ պերճախօսութեամբ՝ լսեցնում էր իր ձայնը աւելի համոզելով քան հրամայելով: Երբ նրա կարծիքները հաճելի չէին ժողովրդին, վերջինս տրտունջներով իր մերժումն էր յայտնում:

Նոյն սովորութիւններն ենք տեսնում արիական ու սեմիտական ցեղերի աշխարհում և հիւսիսային Ամերիկայի կարմրամորթների մէջ: Չըկայ ուրիշ կառավարող ոյժ, բայց եթէ միայն կազմակերպւած համայնքի միահեծան կամքը: Եւ միւս կողմից էլ այդ ընդհանուր կամքը որոշելու մէջ գլխաւոր դերը խաղում է ժողովրդական ընտիր փոքրամասնութիւնը:

Ուշագրաւ է, որ քաղաքական այդ հինաւորց կազմակերպութեան ձևը դեռ մինչև օրս էլ պահպանւել է Նէյցարիայի մի քանի կանտօններում: Ուրի, Ապպենցել կանտօնների տարեկան համագումարները (Landsgemeinde) նոյն նախապատմական տեսարաններն են վերարտադրում մեր աչքերի առաջ: Ժողովրդական հանդիսաւոր պարլամենտներ, ուր հազարաւոր պարզ քաղաքացիները, համախմբւած իրանց օրէնսդիր ու գործադիր իշխանութիւնների հետ, բոլորն էլ հաւասար ձայնի իրաւունքով քննում ու վճռում են համայնքի, կանտօնի կենսական խնդիրները: Ժողովուրդը՝ միահեծան տէր իր ճակատագրի՝ այո կամ ոչ ով, ձեռքերը դէպի երկինք բարձրացնելով, ընտրում ու հետացնում է իր վարիչներին, պաշտօնեաներին... Մի յուզիչ ներդաշնակութիւն՝ նահապետական պարզութեան մէջ... «Վայրենութիւնը» այդպիսով հիւսւում է ամենաառաջադէմ քաղաքակրթութեան հետ, սակայն այս դէպքում վայրենութիւնից մնացած ժառանգութիւնը՝ ժողովրդական կառավարութեան ձևն է, սամկավարութեան մեծ սկզբունքը:

V.

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Է Ի Օ Լ Ի Ի Ց Ի Ա Ն

Ի՞նչպէս են առաջացել դասակարգերը.—Սպենսերեան քերական.—«Հօլօթէնի» ակադեմիականները.—Նախնական վիճակ.—Մարդակերպիւն եւ գերաբիւն.—Սպենսեր եւ Մարքս.—Տնտեսական գործօնի գերակշռող դերը.—Գերաբիւնը իբրեւ պրօգրէսիւ մի հաստատութիւն.—Պալ. յաջորդական ժաղիսներ.—Սերկուրիւլ: եւ հարսութիւն.—Ի՞նչպէս է ծնունդ առել միասնեման բռնապետութիւնը —«Աւստրալիան ծագման» քերական.—Բռնապետութեան անխուսափելի անկումը:

Իրասակարգային բաժանումը մարդկային հասարակութեան մէջ մի անգամ արդէն սկզբնաւորելով՝ առաջ է դնում ձակատագրական անհրաժեշտութեամբ և միշտ նորանոր ճիւղաւորումներով: Սպենսերեան օրէնքը փորձում է լուստրանել այդ էլօլիւցիան,—մէկը սօցիօլօգիական ամենածանրակշիռ պրօբլեմներէն: «Հասարակական ագրէգատի մէջ (agregat, համախմբում), ինչպէս ամեն մի ուրիշ ագրէգատում, միատարր (հօմօթէն) գրութիւնը անկայուն է, և երբ արդէն գոյութիւն ունի մի որոշեալ այլատարրութիւն (hétérogénéité). վերջինը ձգտում է աւելի ևս մեծանալ»,—անա այդ ընդհանուր, տիրական օրէնքը:

Բացարձակապէս համատարր վիճակ երբեք չէ եղել մարդկային հասարակութեան մէջ, ինչպէս նա չէ եղել տիեզերական միգային զանգւածում, ինչպէս նա չէ եղել և կեանքի աղբիւր—պրօտօպլազմի մէջ: Որոշ չափով զանազանաւորում, դիֆֆերենցիացիա գոյութիւն ունի միշտ:

Հասարակական օրգանիզմը իր ամենասկզբնական վիճակում անգամ որոշ չափով այլատարր էր, հէնց այն պատճառով՝ որ երկու տարրեր սեռ, տղամարդ և կնամարդ կանգնած էին դէմ առ դէմ, իրենց տարրեր ուժերով ու ֆունկցիաներով, մէկը իբրև իշխող ու կառավարող, միւսը՝ իբրև ստորադրեալ: Անա ձեզ արդէն երկու դասակարգ իսկզբանէ անտի:

Ժամանակի ընթացքում ծնունդ է առնում կանանց կողքին մի այլ ստրուկ տարր—գերիների դասակարգը: Ի՞նչպէս է ծնունդ նա:

Պատասխանը պարզ է:

«Փաստեր կան, ասում է Սպենսեր, որոնք մտածել են տալիս, որ մարդկանց գերի դարձնելու սովորութիւնը աննշմարելի աս-

տիճաններով առաջ է գալիս մարդակերպութիւնը... Երբ գերի բռնաւանորը չափազանց շատ էին և անկարելի էր իսկոյն նրանց լափել, մի մասը պահել են աւելի ուշ սպառելու համար և պարզել է, որ այդ գերիներին սշխատեցնելով, աւելի արդիւնք կարելի է ստանալ, քան թէ մորթելով. այն ժամանակ ծագել է սովորութիւն՝ պահելու բռնաւանորին որպէս գերի» *):

Գրեթէ բոլորովին նման բացատրութիւն է տալիս և Ֆարքսը ակունտեսական մտերիալիով. Սպենսերը միայն զանց է առնում յիշել, որ գերութեան ծնունդը պատկանում է այն նշանաւոր էպօլիսային, երբ կենսական ու նահապետական կարգերի խորտակելու հետ՝ հիմնականապէս յեղաշրջում էին սեփականատիրական պայմանները, երբ արդիւնաբերական գործիքները մշակման շնորհիւ՝ կործանւում էր հին, համայնական սեփականութեան սխտեմը և ծնունդ էր առնում անհատական, մասնաւոր սեփականութիւնը, որ անհատը կարող էր աւելի արտադրել, քան սպառել, երբ այդպիսով «տէրերին», զօրավարներին հնարաւորութիւն էր ներկայանում շահագործելու իր նմաններին, աշխատեցնելու որպէս անկախում շահագործելու իր նմաններին, աշխատեցնելու որպէս անլեզու գրաստներին, քամելու նրանց վերջին ուժերը և նիւթական հարստութիւններ ամբարելու:

Իրասակարգի ծագման ու զարգացման պրօցեսում անուրանալի է տնտեսական գործօնի—արդիւնաբերական միջոցների մշակման ու ծաւալման—մեծ, գերակշռող, վճռական դերը, և Սպենսեր չափազանց միակողմանի դատողութիւն է յայտնում, ասելով որ պատերազմական—զինւորական վիճակը ակտիւ պատճառն է դասակարգային զանազանաւորման, այսինքն դասակարգերի առաջանալուն:

Գերութեան շրջանը յատկանշում է առաջին մեծ դասակարգային բաժանումը մարդկային հասարակութեան մէջ: Ընտանեկան հողից՝ սխտեմը անցնում էր քաղաքական—սօցիալական հողի վրայ և առաջ բերում երկու բոլորովին տարբեր դասակարգեր, որոնցից մէկը՝ իր աշխատանքով պահպանում էր ամբողջ գոյութիւնը, միւս՝ իշխող փոքրամասնութիւնը՝ ստանձնում էր կառավարելու դերը:

Գերին գուրկ էր մարդկային բոլոր իրաւունքներից, նա չուներ իրաւական անձնաւորութիւն: Իր ամբողջ ընտանիքով նա դրոււմ էր տիրոջ բմահաճ տրամադրութեան տակ, որը կարող էր ան-

* Principes de Sociologie.

պատիժ կերպով մեռցնել կամ ծախել նրան, կնոջն ու երեխաներին: Գերին նոյնպիսի մի սեփականութիւն էր տիրոջ ձեռքում, ինչպէս մի կտոր հող, մի եզ, մի գործիք:

Այդ վիճակը գրեթէ համաշխարհային տարածումն ունէր: Արևելքը գերութեան ծաղկման որրանն է ի հարկէ: Գրեթէ բոլոր երկիրները—Եգիպտոս, Ասորեստան, Հնդկաստան, Չինաստան և այլն—տեսել են այդ ոէժիւմը:

Պարզ է, թէ որքան աղէտաբեր հետեանքներ կարող էր ունենալ գերութեան ոէժիւմը մարդկանց բարոյականի տեսակէտից: Եւ այն՝ ոչ միայն գերիների համար, որոնք կորցնում էին իսպառ մարդկային արժանապատւութեան զգացումը և դատապարտելով գրաստի յաւիտենական աշխատանքի՝ իսպառ բթանում էին ուղեղով—այլ և իրանց՝ տէրերի համար: Բացարձակ ու բռնակալ հեղինակութեան մշտնջենաւոր գործադրութիւնը ապականում էր բարբերը: Ամեն մի տէր, գերիների ամեն մի խմբի հրամանատար մի սանձարձակ բռնակալ էր իր շրջանում ու ընտանիքում դարգանում էին հրէշաւոր չափերով զգայնական ախորժակները, թունաւորում էր ընտանեկան, հասարակական կեանքը... Այո, և այնուամենայնիւ գերութիւնը հասարակական գիտութեան դատաստանի առջև հանդիսանում է ոչ միայն իբրև անհրաժեշտ, այլ և օգտակար ու պրօգրեսիւ հաստատութիւն. պրօգրէս էր նա հէնց բարոյական տեսակէտից. թէև դաժան, տմարդի, բռնակալ, բայց նա գէթ այլևս խմբովին չէր մորթում, լափում մարդ էակներին, ինչպէս անում էր կանիբալիզմի, մարդակերութեան շրջանում. գերութեան ոէժիւմը խնայում էր մարդուս ամենաթանկագին սեփականութիւնը,—խնայում էր կեանքը: Պրօգրէս էր նա և տընտեսական զարգացման տեսակէտից, քանի որ բազմամիլիոն գերիների անդու Ֆիզիքական աշխատանքը ահագին թուիչքներ էր հազորդում արդիւնաբերութեան և առևտրին: Պրօգրէս էր և ընդհանուր կուլտուրական տեսակէտից. գերիների շնորհիւ մի ամբողջ գասակարգ հնարաւորութիւն ունէր նւիրելու մտաւոր, քաղաքակրթութեան աշխատանքի, զարգացնում էր արւեստը, գիտութիւնը, փիլիսօփայութիւնը. առանց հնադարեան գերութեան՝ թերևս անհնարին լինէր Արիստօտէլների ու Ֆիզիասների երևան գալը...

* * *

Էւօլիւցիան շարունակում է գերութեան սիստէմին յաջորդում է ճորտութեան սիստէմը: Նա սկիզբ է առնում, Սպենսերի կարծիքով, հողային ընդարձակ նւաճումներով: Նւաճում էին ամբողջ համայնքներ և բռնի միացւում յաղթողի համայնքին: Մարդիկ այլևս չէին պոկւում իրենց ծննդավայրից, ինչպէս գերութեան դաժան ժամանակներում, այլ մնում էին իրենց նւաճւած, հայրենիքի մէջ, իբրև օրինաւոր հպատակներ և որոշ տուրք էին վճարում նւաճողներին: Դարձեալ ստրկութիւն է, միայն այն զգալի տարբերութեամբ՝ որ աշխատաւոր մեծամասնութիւնը արդէն վայելում է որոշ իրաւունքներ. մարդկանց այլ ևս չէին կարող սպանել ուղած ժամանակ, կամ անվերջ աշխատացնել մտրակով և դազանակով:

Նւաճողները—ւովորաբար տարբեր ցեղից—կազմում էին զինւորական մի կաստա և պահանջում էին հողի մշակողների բերքերից մի որոշ մասը: Տրամագրելի ստրուկների թիւը մարդրկանց ձեռքում կրիտէրիում էր ոչ միայն ուժի և հարստութեան, այլ և «ազնւականութեան»: Ըստ այնմ հասարակութիւնը բաժանւում էր՝ ազնւականների և պարզ սովորական մահկանացուների:

Չինւորական բառը նախնի դարերում գրեթէ համանիշ էր քաղաքական բառին: Հողատէրերը—յաղթողները, նւաճողները—միաժամանակ զինւորներ էին, այն ինչ ամեն տեսակ ստրուկները, ճորտերը արտաքսւում էին զինւորական ծառայութիւնից (ժամանակը շատ տեղերում փոփոխեց, մեղմեց այդ յարաբերութիւնները): Այդտեղ է հիմնական տարբերութիւնը երկու մեծ դասակարգերի միջև.—մէկը զինւորական, իշխող ու կառավարող, միւսը աշխատաւոր:

Դասակարգային զանազանաւորման նպաստում էր որոշարական ծննդակարգի սահմանումը: Անհաւասարութիւնը դասակարգերի մէջ միշտ աւելի և աւելի աճում է, քանի որ նրա շնորհիւ իսկ՝ իշխողը, բարձր դիրք ունեցողը միջոցներ է ձեռք բերում պահպանելու իր ուժը և աճեցնելու իր յարձակողական ու պաշտպանողական ուժերը: Հասարակական դիրքի անհաւասարութիւնը առաջ է բերում ֆիզիքական տարբերութիւններ. ապ-

ընդու տարբեր եղանակները արտադրում են մտաւոր ու հոգեկան—զգացողական տարբերութիւններ, որոնք հետզհետէ աւելի ևս ծանրացնում են կօնտրաստը դասակարգերի միջև:

Քաղաքական էւօլիցիան միշտ առաջ է գնում: Նւաճումները շնորհիւ, բազմաթիւ մանր համայնքներ ձուլւում են, կազմում մեծ ու բարդ հասարակութիւններ: Մանր ու մուկը զինւորական շէֆերը/սեփականատէր—ձորատաէրերը կամաց-կամաց տեղի են տալիս մի լայնածաւալ, որոշ ու յստակ հասարակական խաւի, կառավարչական մի բարդ մեխանիզմի, որի գլուխ է կանգնած բացարձակ լիազօրութիւններով մի շէֆ, Թալատը:

Մեր տեսութեան նախորդ էջերում արդէն խօսեցինք կառավարութեան նախնի ձևերի մասին, ուր համայնքի աւագագոյն ներկայացուցիչները ձայնը այնքան մեծ կշիռ ունէր, ուր հանդիսատես ամբողջ անգամ յաճախ ազդում էր խնդիրների լուծման ընթացքի վրայ իր հաւանութեան կամ պարսաւանքի աղաղակներով, ուր շէֆերը, ժողովուրդների հրամանատարները աւելի, այսպէս ասած, իշխում էին, քան կառավարում:

Այդ դրութեան մէջ շատ հաճելի ռամկավարական, իդիլիկ կողմեր կան, բայց այնուամենայնիւ նա հին ու խաւար դարերի ծնունդ էր և պէտք է չքանար քաղաքակրթութեան ալիքների առջև: Քաղաքակրթութեան սկզբունքը շարժել է ուզում լայն հօրիզոններում... Մանր համայնքները իրենց ռամկավար, բայց նահապետական, բիրտ կառավարութիւններով պիտի տեղի տային ձևատազրօրէն աւելի մեծ, թէկուզ և բռնաւոր, պետութիւններին, կառավարութիւններին:

Միահեծան բռնապետութեան սկզբունքը, ինքն ըստ ինքեան անհամակրելի է, բայց մենք դատում ենք այն՝ ոչ բացարձակ absolute-ի, այլ յարաբերականի relatif-ի տեսակէտից: Այդպէս դատելով՝ բռնակալ միապետութիւնը ընդունելի է,—իբրև ժամանակաւոր, ոչ մշտակայուն մի հաստատութիւն: Իբրև այդպիսին՝ նա միանգամայն գրական ու օգտակար մի կատէգորիա է պատմական էւօլիցիայի պրօցէսում:

«Իրողութիւնները ստիպում են մեզ խոստովանել, ասում է Մպինսեր, որ մարդկանց ստորադրումը բռնակալ վեհապետներին մեծապէս նպաստել է քաղաքակրթութեան առաջադիմութեանը:

Թէ ինդուկտիւ և թէ դէդուկտիւ ճանապարհները որքան կուզէք, ապացոյցներ կը բերեն դրան:

«Բռնակալութեան անհրաժեշտութիւնը աւելի ևս լաւ կը դիտակցէք, երբ ի նկատի ունենաք, որ հասարակութիւնների գոյութեան կուում հաւասար պայմանների մէջ յաղթողը եղել են նրանք, որոնք ենթարկւած են եղել ամենից խիստ ստորադասութեան (Subordination) իրենց շէֆերին, թագաւորներին:

«Քանի որ նախնական դարերում զինւորական ստորադասութիւնը և հասարակական հպատակութիւնը ընթանում էին զուգակցաբար, պարզ է ուրեմն որ երկար ժամանակ նւաճող հասարակութիւնները ենթարկւած են եղել բռնակալ ուժի մի: Պատմութեան տւած բացառութիւնները իրօք միայն հաստատում են այդ կանոնը: Սովորութիւնը՝ դիքտատոր նշանակել այն վայրկեաններում, երբ թշնամու կողմից վտանգ էր սպառնում հանրապետութեանը՝ մտածել է տալիս, որ հոռոմայեցիները փորձով հակացել էին, որ միահեծան իշխանութիւնը գերազանցութեան պայմանն է պատերազմի մէջ»:

Այդպէս ուրեմն մարդկային հասարակութիւնների գոյութեան անողոր, յարատև արհաւրալի կռիւներն են, որ ժամանակի ընթացքում ձուլելով մանր համայնքները աւելի և աւելի խոշոր հասարակութիւնների մէջ և ծնունդ տալով մեծ ազգութիւններին, առաջ են բերել հասարակական այն համեմատաբար բարձր տիպը, որի յատկանիշն է արսօլիտիզմը, բացարձակ անձնական իշխանութիւնը:

Այդ վերջինը իր զարգացման ընթացքում անցել է դանազան մ.մենտներ: Դեռ սկզբներում՝ շէֆերը, մարդկանց հրամանատարները հիմնում էին իրենց ազդեցութիւնը իրենց անձնական արժանաւորութիւնների վրայ,—ֆիզիքական ուժի, արիութեան, փորձառութեան, կամ թէ իր մտաւոր կարողութիւնների վրայ: Դա այսպէս ասած՝ բնական գերազանցութիւնն էր, որ նախամարդու աչքում մարմնացնում էր հերոսը, ռազմիկը:

Բայց կար և մի ուրիշ «գերազանցութիւն»—արդէն գերբնական—որի արտայայտիչ հանդիսանում էր կախարդը: Այդ երկու գերազանցութիւնները, յաճախ միանալով միեւնոյն շէֆի անձնաւորութեան մէջ, դարձնում էին նրան կարող ու ազդեցիկ, սակայն լոկ դրանց վրայ հիմնւած իշխանութիւնն ու հեղինակու-

թիւնը ժամանակաւոր էր, անցողական—նա դադարում էր շէֆի մահւան հետ:

Պէտք էր մի այլ գործօն՝ այդ հեղինակութիւնը, այսպէս ասած, յաւերժացնելու համար: Պէտք էր ժառանգականութեան սկզբունքը, առնական գծով: Վերջինս երևան է գալիս քաղաքակրթութեան սանդուղքի համեմատաբար բարձր աստիճանների վրայ, հայրական իրաւունքի տիրապետութեամբ: Մի իրաւունք՝ որ ժխտումն էր մատրիարխատի (մայրական իրաւունքի) վաղեմի դրութեան, երբ իբրև արդիւնք ամուսնական խառնակեցութեան երկարատև սխտեմի՝ մօր ֆիզիօլօգիական կապն էր միայն հաստատուում սերնդի վրայ, մօր հեղինակութիւնն էր ճանաչուում, յարգուում, մօր անունով էր մկրտուում տոհմը և մօր գծով էր սահմանուում ամբողջ ժառանգականութիւնը:

Պատրիարխատի, հայրական իշխանութեան ամբապնդումը սերտ կապ է հաստատուում գերգաստանի մէջ, զարկ է տալիս հպատակութեան ըէժիմին, զարգացնում է դիսցիպլինը, կարգապահութիւնը նոյն համայնքի և պետութեան մէջ: Բացարձակ վեհապետը կտակում է իշխանութիւնը իր յետնորդներին—առնական գծով—որոնք շարունակում են վարել պետական գործերը նոյն բացարձակ ու բռնաւոր ձևով: Կառավարութեան այդ միատեսակ ձևը ժառանգելով սերնդէ սերունդ, կրկնողութեան շնորհիւ, միշտ աւելի և աւելի ամբապնդում է, ուժեղանում:

Մի ուրիշ ֆակտօր ևս գալիս է ժամանակի ընթացքում աւելի հմայք և ոյժ հաղորդելու բռնաւորի անձնաւորութեան: Դա նրա աստածային ծագման հանգամանքն է, որի բացատրութիւնը փնտրելու է կրօնական վաղեմի հասկացողութիւնների և մասնաւորապէս նախնիքների պաշտամունքի մէջ (Culte des ancêtres), որը Սպենսերեան հուշակաւոր թէօրիայի համեմատ, չուկէտն է բոլոր կրօնական հաւատալիքների:

Բոլոր նախնի ժողովուրդները ունեցել են այդ սովորութիւնը—մեծարել, պաշտել, հարազատ մեռելիներին, որոնց դաժարանների շուրջը այլ և այլ ծէսեր են կատարել, գոհեր են մատուցել: Դա կրօնական էլօլիցիայի սկզբնական շրջանն է, ուր մարդկային միտքը իր խղճուկ, տարտամ ըմբռնումի մէջ՝ առարկայական գոյութիւն էր հաղորդում ամեն տեսակ ոգիներին ու հոգիներին, որոնք օժտւած էին բարիք ու չարիք գործելու հակ-

յական կարողութիւններով: Ժամանակի ընթացքում այդ մեռելները ստացել են աստածային ատրիբուտներ, նրանց մէջ ոմանք իրենց արտակարգ յատկութիւններով՝ առանձին գերիշխող դիրք են զբաւել, ոչ միայն գերգաստանում, այլ և հասարակական ընդարձակ զանգւածի՝ տոհմի, ցեղի մէջ:

Երկիւղը մի հզօր ռազմիկի, մի հերոս հրամանատարի գերեզմանի առջև՝ մղել է մարդկանց դէպի ապօթէօզ, սախել է նրանց աստածացնել այդ հզօրին, յաճախ նրան սիրաշահելու, գինաթափ անելու նպատակով:

Երբ պատերազմների ու նւաճումների շնորհիւ ցիր ու ցան մարդկային զանգւածները համախմբւելով ի մի են ձուլւել՝ հերոս աստուծոյ պաշտամունքն էլ ընդհանրացել է և աւանդաբար անցել սերունդներին: Այդտեղից—երկու հետևանք: Մէկ՝ որ հզօր հրամանատարի յաջորդը, որը գահակալում է հօր մահից յետոյ՝ հուշակուում է իբրև հաղորակից հօր աստածային բնութեան, մէկ էլ՝ որ նա իր զոհարեցողութիւններով հարստացնում էր շաւղցուութիւնն է վայելում:

Եւ անա անսահման լիազօրութիւններ: Քաղաքական շէֆը, իբրև Աստուծուց առաջացած կամ ուղղակի նախախնամութիւնից սահմանւած՝ դառնում է թէօրիայում և իրականութեան մէջ բացարձակ սեփականատէր իր բոլոր հպատակների և նրանց զբաւած բոլոր հողերի:

Երբ այդպիսով, երկրի հրամանատարը ստանձնում է միահեծան, անսահման իշխանութիւն, երբ հպատակները հլու հնազանդութեամբ խոնարհուում են նրա գահի առջև, ենթարկւում են նրա կայրիղներին, ապաւինում են նրա զթութեան, երբ այդ իշխանութիւնը համարւում է սրբազան ու անբռնաբարելի և ամեն մի ձգտում նրա դէմ՝ բացարձակ սրբապղծութիւն. երբ միահեծան պետը և աստած է և հրամանատար, այն ժամանակ նա բընականաբար միացնում է իր անձի մէջ իշխանութեան բոլոր ձևերը, այն ժամանակ նա դառնում է և գերագոյն դատաւոր և եկեղեցու պետ: Թագաւորը կենտրոն է հանդիսանում հասարակական բովանդակ կազմի, նրա բովանդակ պաշտօնավարութեան:

Այդ է ինքնակալ բռնապետութիւնը կամ արսօլիատիզմը, իր լիակատար զարգացման մէջ:

Թագաւորը իշխում է տիրականօրէն, բայց կառավարում է

ոչ միայն ինքը: Ընդարձակ պետութեան կարիքները հոգալու հա-
մար՝ նա պէտք ունի օգնականներին, նշանակովի միխտարներին:
Վերջիններս, գլուխ կանգնելով այլ և այլ դեպարտամենտներին,
վարում են գործերը շատ թէ քիչ ինքագլուխ և իրօք սահմանա-
փակում են միահեծանի կամքն ու լիազօրութիւնները: Թագաւո-
րի կապը պետական ամբողջ միխտարի դմի հետ դառնալով միշտ
աւելի և աւելի անուղղակի՝ հասնում է մի մօմենտ, երբ նրա իշխա-
նութիւնը դառնում է անւանական - le roirègne, mais ne gouverne
pas—երբ նա հանդիսանում է լոկ խաղալիք իր առաջին միխտար-
տրի կամ ամբողջ կամարիլլայի ձեռքում. մի աւտօմատ, որ դա-
տապարտած է գործադրել իր իսկ ստեղծած ագենտներին կամքը...

Եւ այդպիսով վեհապետը յայտնում է կատարեալ անկարո-
ղութեան մէջ՝ իր հրամանները պայմաններին յարմարեցնելու և
նրանց գործադրելը կամ չը գործադրելը ստուգելու:

Այդ վիճակը պարզ է, որ չէ կարող յարատեւել: Աբսօլիտիզմը՝
մը՝ զինւորական, պատերազմական տեսակէտից իր նշանաւոր
պատմական դերը կատարելուց, հասարակական գործակցութեանը
(Coopération) մեծ զարկ տալուց յետոյ ներքին յարակայ ուժերի
մղումով, ժամանակի ընթացքում տեղի է տալիս նոր, սահմանա-
դրական կարգերի առաջ և միահեծանի քմա՛ւան կամքը փոխարինում է ժո-
ղովրդական գերիշխանութեան մեծ սկզբունքով:

VІ.

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Է Ի Օ Լ Ի Ի Յ Ի Ա Ն

Ինդուստրիալիզմ և միլիտարիզմ. — Գարձեալ Սպենսեր և Մարքս. — Էլ օլիգիան՝
հին ու միջին դարերում. — Քաղաքների զարգացումը և նրանց պոսիտիւսի
դերը. — Եւրոպ դասակարգը. — Նորագոյն պարլամենտարիզմի ծնունդը. — Սպենսեր՝
կասալի խառնակ պարլամենտարիզմի. — Մեծամասնութեան սքսեմը, նրա առա-
նները. — Պետութեան բոլոր ձեւերը — բոնակալ են. — laissez faire. — Անարխիզմը Սպեն-
սերի մէջ. — Անհատը պետութեան դէմ. — Յարտունւն ապակեմսոբուցում. — Ճեմտ-
ութեան բաժինը Սպենսերի ֆինալսութեան մէջ. — Նրա ծայրայեղութիւնները. —
Միխայիլովսկի և Սպենսեր. — Պրօգրեսի գաղափարը ուսու սօցիօլոգի բնութագրումով. —
Սպենսերիանիզմը և Սօցիալիզմը:

Ինդուստրիալիզմը, արդիւնաբերութեան և առևտուրի զարգա-
ցումը, Սպենսերի կարծիքով, խթան է հանդիսանում քաղաքա-
կան առաջադիմութեան: Ահաւասիկ, եթէ կուզէք, մի ընդհանուր

զի՞ծ ևս, մի նմանութիւն ևս Սպենսերիանիզմի և Մարքսիզմի մէջ:
Այնտեղ, ուր տնտեսութիւնը յետամնաց է, ուր արդիւնաբերող
ու փոխանակող աշխատանքը թոյլ է զարգանում կամ բնաւ չէ
զարգանում, այնտեղ առհասարակ (սակաւաթիւ բացառութիւններով)
միլիտարիզմն է բարգաւաճում և նրա հետ՝ բացարձակ ու բռնակալ
կառավարութեան ձեւը: Զինւորական ուժի մը, արգարև, սո-
վորաբար հետևանք է ունենում իշխանութեան կենտրոնացումը
փոքրաթիւ ձեռքերում: Եւ ընդհակառակը, ասում է Սպենսեր,
այնտեղ՝ ուր ծաղկում են առևտուրն ու արդիւնաբերութիւնը՝ կայ
քաղաքական առաջադիմութիւն, կան կառավարութեան լայն
ու ազատ ձեւեր, — հանրապետութիւն, սահմանադրութիւն — կայ, մի
խօսքով, իրերսիզմ:

Այդպիսով ինդուստրիալիզմ և միլիտարիզմ յայտնում են
մի տեսակ անտիպօզիտներ, հակոտնեաներ, իրար ժխտող, չէզո-
քացնող: Դուրս է գալիս, որ տնտեսական զարգացումը և սահ-
մանադրական լայն ազատութիւնները անհաշտելի են (incompa-
tible) զինւորական ուժի մի հետ և որ այդ վերջինը աստիճանա-
բար ու ճակատագրօրէն պիտի անհետանայ ինդուստրիալիզմի
առաջխաղացութեան հետ:

Այդ կարծիքն էր պաշտպանում Սպենսեր 60-ական թւերից
սկսած մինչև իր կեանքի վերջալոյսը: Կեանքի վերջալոյսին, որ
երեկ էր, աշխարհը ներկայանում էր փիլիսօփային հիմքից յեղա-
շրջած, միանգամայն տարբեր պատկերով: Նա իր մարգարէու-
թիւնների ժխտումն էր տեսնում: Նա ազդարարել էր — մի զւարթ
ու ջինջ լաւատեսութեամբ — դեռ իր «Սօցիօլոգիական Սկզբունք-
ներ»-ում, որ աշխարհը գնում է դէպի խաղաղասիրական մի
շրջան, գերծ միջազգային ընդհարումներից, որ միլիտարիզմը,
գիւտախիչ, նւաճողական ախորժակները աստիճանաբար նւազում
են, մասնաւորապէս իր հայրենիքում, Մեծ Բրիտանիայում, ուր
մարդիկ թէև ազատած չեն զինւորական տիպի յոռի գծերից,
բայց ծաւալում են մարդկութեան առաջ իրենց առանձին ընդու-
նակութիւնը, ինիցիատիւր՝ թէ ինդուստրիական և թէ քաղաքա-
կան առաջադիմութեան աշխարհում:

Այժմ փիլիսօփան, իրաւ է, տեսնում էր իր հայրենիքի
տիեզերական ծաւալումը, նրա յաղթական տիրապետութիւնը
համաշխարհային առևտրի շուկայում, բայց նա տեսնում էր դրա

հետ միասին նոյն հայրենիքի հոգեբանական wolte-face-ը, նրա ձգտումը դէպի միլիտարիզմ, գէպի ազգամատենչ իմպերիալիզմ, որի կրողն էր հանդիսանում հաշակաւոր Չեմբերլէն իր բազմամիլիոն ջինգօներէ բանակով: Նա տեսնում էր Տրանսապլեան պատերազմ, ազատ, ինքնավար ժողովուրդների ոտնահարում, ազատամիտ աւանգուժիւնների հանդիսաւոր սրբապղծում, տեսնում էր պան-բրիտանիզմի, համաշխարհային զինուորական տիրապետութեան քրիտանիզմի, համաշխարհային զինուորական տիրապետութեան տեսչանքներ, ջինգօյիզմի վայրենի ու գիշատիչ բնազգների շղթայազերծ բորբոքում—և այդ ամենը Գլադստօնի հայրենիքում...

Նա տեսնում էր Գերմանիան, ինդուստրիայի, խոշոր բարգաւաճող արդիւնարեւութեան ու առևտրի այդ երկրորդ, մեծ երկիրը՝ նոյնպէս մատնւած միլիտարիզմի ու կեսաբիզմի պատուհասներին: Միլիտարիզմի ձգտումներ ամեն տեղ՝ և Փրանսիայում և Իտալիայում և նոյնիսկ Ամերիկեան մեծ հանրապետութեան մէջ...

Մի դառն խոստովանութիւն էր, որ դուրս թուա այն ժամանակ Սօցիոլօգի բերանից, իր մահաւան նախօրեակին: Սպենսեր ազգարարից իր վրիպումը և զբանով իսկ ցոյց տւեց, թէ որքան զգոյշ պիտի լինել, երբ փորձում ենք կեանքի էւօլիւցիան իր բոլոր ելեէջներով ու կնճիոներով դարբնել կրկիկ, որոշ ու յստակ Փօրմուլներէ մէջ...

Եթէ քիչ էլ ապրէր, Սպենսերի խոր հիասթափութիւնը, ճիշտ է, փոքր ինչ կը մեղմանար, ի տես այն նոր, ազատամիտ ուձժիմի, որ աճա վերջապէս յաղթանակում է մեծ Բրիտանիայում, քսան տարւայ անփառունակ գոյութիւնից յետոյ: Սակայն այդքանը զեռ բաւական չէր՝ փոխելու համար Սօցիոլօգի վշտառիթ խոստովանութիւնը: Անցնենք մեր նիւթին:

Այդպէս ուրեմն, ամեն տեղ քաղաքական առաջադիմութիւնը, ազատ ուձժիմը զուգադիպում են առևտրի ու արդիւնարեւութեան զարգացման հետ: Այդպէս էր զեռ Աթէնքի մէջ, հին Յունաստանում: Շատ թէ քիչ լայն դամկավարութիւնը ծայր է տալիս Սօլօնի օրով (ծն. 639 թ. Ք. Ա.), մի շրջանում, երբ սկսում էր զարգանալ առևտուրը: Դրանից առաջ Աթէնքը միայն երկու տեսակ ուձժիմ էր տեսնել՝ օլիգարխիկ (ուր քչերն են իշխում) և բոնապետական: Սօլօնը, իհարկէ, չըվերացրեց, այլ մի-

այն սահմանափակեց օլիգարխիան, վերջ դնելով արդաղակող անարդարութիւններին:

«Այդ բարենորոգման պատճառները, ասում է Սպենսեր, կայանում էին առևտրի ուղղակի կամ անուղղակի ազդեցութեան մէջ» *): Արդիւնաբերոյ, ստեղծագործող աշխատանքը, մինչ այն արհամարհւած Յունաստանի մէջ, յարգանք էր վաստակում: Սօլօնն ու Դրակօնը, հաշակաւոր Դրակօնը, որ, ինչպէս յայտնի է, ծուլութիւնն անգամ պատժում էր յաճախ ժահւան պատժով, ներշնչում կամ հարկադրում էին քաղաքացիներին՝ սէր դէպի աշխատանք ու ինքնագործունէութիւն: Շատ ստրուկներ տղատազրեցին: Ազատ մարդկանց թիւն ստւարացաւ—մի բան, որ դարկ տւեց առևտրին ու արդիւնագործութեան: Աթէնքը դարձաւ առևտրականների մի վայր: Վերջինները մուտք գործեցին կառավարական մեթանիզմի մէջ: Նախկին օլիգարխիկ կազմը, որ հիմնւած էր ծագման առանձնաշնորհումների վրայ, Սօլօնի ջանքով փոխարինւեց, նոր կազմով, հիմնւած փողային ցենզի վրայ. դա մի քայլ առաջ էր, քանի որ փողային ցենզը, որ բղիւում էր մարդկային աշխատանքից, ինքնագործունէութիւնից, այսպէս թէ այնպէս բարձր է «ձագման» ցենզից:

Պէտք է նկատել և այն հանգամանքը՝ որ քաղաքների բնակիչները, լինելով աւելի սերտ փոխադարձ յարաբերութեան մէջ՝ նորի՝ շիւմու ևս աւելի կենդանի ու արագ է կատարւում նրանց յրջանում, քան թէ գիւղերի, դաշտի ցիր ու ցան բնակիչների աշխարհում: Առհասարակ, մեծ է քաղաքների դերը կուլտուրայի պատմութեան մէջ **):

Այդպէս, այլ և այլ ճանապարհներով ինդուստրիական գործունէութիւնը ձգտում էր լայնացնել նախնական օլիգարխիան, քչերի տիրապետութիւնը: Պատահում էր, որ այլ և այլ պատճառներ խափանում են այդ գործունէութիւնը, բայց նա վաղ թէ ուշ դարձեալ երևան է գալիս և արտադրում է իր անխուսափելի հետևանքները:

Նոյն ինդուստրիական առաջադիմութիւնը նպաստեց և Հռով-

*) Principes de Sociologie.
 **) Այդ իրողութեան թարգմանը պիտի համարել և «քաղաքակրթութիւն» հայերէն բառի բարդութիւնը: Բ. Յ.

մի օլիգարխիայի ընդարձակման, բարենորոգման: Մի կողմից ազատագրւածները (les affranchis, վաղեմի ստրուկներ), միւս կողմի եկտրների յարաճուն հոսանքը, որ միջազգային առևտուրը մղում էր դէպի Հռովմայն-կազմեցին այնտեղ ինդուստրիական մի ազգաբնակութիւն, որը ինչպէս Յունաստանում, հետզհետէ իրաւունքներ ձեռք բերեց և մուտք գործելով քաղաքացիների օրէնսդիր մարմնի մէջ, լայնացրին հռովմէական սահմանադրութիւնը, Սերվիուս Տուլլիուսի օրով:

Համեմատաբար նոր ժամանակներում՝ նոյն երևոյթն ենք դիտում: Իտալական մանր ու մուկը հասարակագետութիւնների մէջ (Ջենօվա, Պիզ, Յլօրանս, Վենետիկ) ազատամիտ ուժերը ծնունդ էր առևտրական կեանքի: Այդ վայրերի վաճառականները մատակարարում էին Եւրօպային՝ Միջերկրականի և Արևելքի ապրանքները. յայտնի է, որ նրանք առաջին անգամը ծաղկեցրին նաև բանկերի, ֆինանսների ու առհասարակ լայն փոխանակութեան գործը:

Նոյն երևոյթը՝ Հօլլանդիայի, Հանզեան քաղաքների (Համբուրգ, Լիւբեկ, Բրեմեն և այլն) և վերջապէս Անգլիայի պատմութեան մէջ,—ամեն տեղ, ասում է Սպենսեր, մենք տեսնում ենք նոյն սերտ առնչութիւնը անտեսական-առևտրական ֆակտորի և քաղաքական ուժերի միջև: Ամեն տեղ քաղաքներն են, շատ թէ քիչ խոշոր առևտրական կենտրոններն են զարկ տալիս լիբերալիզմին, աւանգարդ հանդիսանում քաղաքական առաջադիմութեան:

Երկու հակամարտ ուժերը, այդպիսով, պատմութեան ընթացքում շարունակական պայքարի մէջ են: Մի կողմից միլիտարիզմը, որ ձգտում է կենտրոնացնել կառավարութեան ղեկը մի քանիսի ձեռքում. միւս կողմից ինդուստրիալիզմը, որ հակուճն ունի մեղմելու, բարելաւելու այդ ուժերը, մասնակից անելով կառավարական մեխանիզմին՝ աւելի և աւելի սուտար թւով քաղաքացիներ:

«Ինդուստրիայի առաջադիմութիւնը օգնում է ժողովրդի ազատագրութեան, ծնունդ տալով անհատների մի կատէգորիայի, որոնց ոյժը բղխելով իրենց հարստութիւնից, մրցում է—բրբեմն գերազանցելով—ազնւականների ուժի դէմ, որոնք միակ հարուստներն էին առաջներում» *):

*) Principes de Sociologie.

Քաղաքները իրենց մուկիցիպալ կազմակերպութիւններով ու համբարական կօրպօրացիաներով, լինելով մշտական կոնկրետ մէջ ֆէօդալական ուժերի հետ, ահագին դեր են խաղացել ժողովուրդների ազատագրութեան դարևոր գործում: Անգլիայում, միացած ֆէօդալական ազնւականութեան հետ՝ քաղաքները, պատմական հռչակաւոր երրորդ դասակարգը (tiers Etat), ամենից շուտ զարգանալով, կուում են միապետական իշխանութեան դէմ և վաղաժամ նւաճում են մի քանի էական իրաւունքներ: Անգլիայի սահմանադրութիւնը ամենահինն է: Նոյնն առաջ է գալիս հետզհետէ և ուրիշ երկրներում:

Առևտրականների քաղաքային տարրը սկիզբ է դնում ժողովրդային ներկայացուցչութեան: Փողի դասակարգը, սկզբում աննշան, հետզհետէ սուտարանում է, դառնում անհրաժեշտ ու ծանրակշիւ մի տարր հասարակութեան: Նրա ազդեցութիւնը միշտ աւելի և աւելի աճում է վեհապետների աչքում, որոնց նա մատակարարում է պատերազմների և ուրիշ ձեռնարկների համար անհրաժեշտագոյն ոյժը—նշուն դրամը: Երկար, անդուլ մաքառումներից յետոյ այդ դասակարգը յաղթանակեց, սահմանելով Ազգային Պատգամաւորական ժողով,—պարլամենտ (Corps representatif). Պարլամենտի կամ «ստորին ժողովի» կողքին շարունակում է իր գոյութիւնը պահպանել այսպէս անւանւած «բարձր ժողովը» (սենատ, ձերակոյտ), որ ամենահին ժամանակներից ի վեր կատարել է խորհրդակցական հաստատութեան դեր վեհապետների մօտ (Corps consultatif): Այսօր արդէն նա կատարում է ներգործական դեր: Սենատը, Սպենսերի կարծիքով, կերպարանափոխւած, զարգացած ձևն է հինաւուրց շրջանի պատերազմական ժողովների, ուր թագաւորը, այս կամ այն ձեռնարկի համար, խորհրդակցութեան էր կոչում բոլոր զինուորական առաջնորդներին: Լինելով յաճախակի շփման մէջ թագաւորի հետ՝ այդ առաջնորդները տեղ-տեղ կազմել են մշտնջենական խորհրդակցական մարմիններ:

Այսպէս ծնւեց, ըստ Սպենսերի, պարլամենտարիզմը, սահմանադրական-առմկավարական կեանքը: Ինչ ասել կուզէ, մեծ փրկիսօփան այդտեղ ևս թոյլ ու թերի է իր պատճառաբանութեան, դատողութիւնների մէջ: Նորագոյն առմկավարութեան ծագման հարցը ամենակարգինալ հարցերից մինն է սօցիօլօգիայում և նա արժանի է շատ աւելի լուրջ թէօրիական հիմնաւորութեան: Այդ-

տեղ կաղում է նոյն իսկ սպենսերեան սովորական ունեւորները: Նա մակերեսային, թուղիկ կերպով է միայն շոշափում այն գործունեները, որոնք եղել են տիեզերական մեծ յեղաշրջման խորունկ պատճառները: Նա ըստ արժանւոյն չէ գնահատում տնտեսական գործունի դերը, սեփականատիրական յարաբերութիւնները, ֆէօդալական և բուրժուազական սիստեմների խոր անտազօնիչութիւնը, արդիւնաբերութեան նոր թռիչքները, մի խօսքով, կապիտալիզմի պանծալի էրան, որ այնպէս վճռական դեր խաղաց համաշխարհային այն դրամային սկզբնաւորութեան մէջ, որի անունն է Ֆրանսիական մեծ Յեղափոխութիւնը և որը անօրինակ ցնցումներով ու զաւարտեմներով ծնունդ տւեց ժամանակակից դէմօկրատիզմին, ռամկավարութեան:

Նա սկսեց բռն «ինգուստրիալիզմի» կամ «լիբերալիզմի» շրջանը: Սակայն պարլամենտական կեանքը իր ժամանակակից ձևի մէջ, դեռ շատ հեռու է Մպենսերի իդէալից: Քաղաքական նորագոյն սիստեմները— սահմանադրութիւն, ռամկավարական հանրագետութիւն— դեռ ենթակայ են երկարատեւ էւօլյուցիայի, նրանք դեռ չեն համապատասխանում ազատ անհատականութեան պահանջներին: Ինգուստրիալիզմը այն ժամանակ միայն լիովին կը յաղթանակէ, երբ կը վերանան միլիտարիզմի բոլոր մնացորդները, երբ կը վերանան անհատի ազատութիւնը խեղդող, կաշկանդող բոլոր արգելքները, երբ ստիպողական, հարկադրիչ միջոցները (mesures coercitives) պետութեան ու հասարակութեան կողմից կը հասնեն իրենց նւագագոյն չափին...

Նա սկսեց Մպենսեր որոտում է բոլոր «բռնակալ» ուժերի դէմ բռնակալ է պետութիւնը (Etat), նոյն իսկ ազատ սահմանադրական պետութիւնը, քանի որ նա յաւանդում է կանոնաւորել (réglementer) քաղաքացիների կեանքը, հասարակական յարաբերութիւնները, միջամտում է նուեորի ու արդիւնաբերութեան կրթութեան ու գաստիարակութեան գործում, սահմանում է հովանաւորող մաքսեր, հարկային սխաւէմ, պարտադիր ուսում, պարտադիր հասարակական բարեկործութիւն և այլն և այլն: Բռնակալ են պարլամենտները իրենց անարդար «վեծամասնութեան» սխաւեմով, ուր կուլ են գնում, տոնահարում են փոքրամասնութեան իրաւունքները: Բռնակալ են պետութեան բոլոր ձևերը, բռնակալ է նոյն իսկ կոմունիզմը, նոյն իսկ ապագայ սօցիա-

լիստակնա կազմակերպութիւնը, քանի որ նրա մէջ ևս անտարպիտի գոհաբերիչ հասարակութեան, հաւարակամութեան...

Սնա և մենք լիակատար անիշխանականութեան մէջ: Բայց արժէ մի քիչ աւելի ծանրանալ սպենսերական պատճառաբանութեան վրայ:

Մպենսեր հռչակւած է իբրև ծայրայեղ լիպիլիտալիստ, անհատապաշտ: Սկսած 50-ական թւականներից, նա իր բոլոր հասարակագիտական գրւածներում, մասնաւորապէս «Սօցիալօգիական Սկզբունքներ»-ում ու «Անհատ պետութեան դէմ» յայտնի ազիտացիական աշխատութեան մէջ՝ մոլեւանդ պաշտպան է հանդիսանում մարդկային անհատականութեան և հակաուկորդ ամեն տեսակ կառավարչական խնամակալութեան, ուղղամենտացիայի ու սահմանափակումների: Նա դեռ վաղ յարեց տնտեսագիտական այն հռչակաւոր շիօլային, որ յայտնի է Անգլիայում «մանչեստերական շիօլայ» անունով և որի հիմնական պահանջն է՝ ասպարէզ տալ ազատ առևտրին ու ազատ մրցման (Laissez faire, laissez passer), պետական միջամտութիւններով ու օրէնքներով չըկաշկանդել տնտեսական ուժերի նօրմալ— բնականոն խաղը: Ընդունելով մարդկային հասարակութիւնը, իբրև էսպէս բնութեան մի հնունդ, Մպենսեր կողմնակից է սօցիալային քաղաքականութեան մէջ այսպէս անւանւած «բնական ազատութեան» սխաւէմին, որ դեռ 18-րդ դարում շատագոյն էր տնտեսագիտութեան հիմնադիրը՝ Ադամ Սմիտ: Բնութիւնը ինքնին սահմանել է մարդկանց մէջ շահերի ու ձգտումների ներդաշնակութիւն, իւրօրօրանշիւրը իր շահերն ու բարօրութիւնը հոգալով, գրանով իսկ միաժամանակ հոգում է ընդհանուրի, հասարակութեան շահը... Մի խօսքով, իրերը եթէ իրանք իրանց թողնուին, կերթան միանգամայն ցանկալի ուղղութեամբ, համաձայն ալտրուիզմի ու արտադրութեան սկզբունքներին, և մենք ապրում ենք աշխարհներից լաւագոյնի մէջ— այդ է բնական ազատութեան ու մանչեստերականութեան ուղին, տենդենցիան...

Իրերի հեռաւոր ընթացքը ցոյց տւեց, թէ որքան խախտու ու արատաւոր էր այդ վարդապետութիւնը. տնտեսական հեռաւոր զարգացումը ցայտուն կերպով հրապարակ բերեց, թէ որ աստիճան ներդաշնակութիւն, հարմօնիա կայ մի սխաւէմի մէջ— բուրժուազական, կապիտալիստական սխաւէմի մէջ— որ հիմնւած

Handwritten notes and scribbles on the right margin, including a large 'U' at the top and a signature 'L. M...' at the bottom.

է դասակարգային արտօնութիւնները, փողի ուժի վրայ և որ մի աղաղակող աններդաշնակութիւն է, տակից մինչև գլուխ:

Պետութիւնը բնաւ չըմիջամտէ, ազատութիւն տալ բոլոր ձեռնարկներին, ազատ թողնել ամեն մի անհատի՝ իր կամքի համաձայն տնօրինել իր քախտը՝ տիեզերական գոյութեան պայքարի, ազատ ու տենդային մրցակցութեան մէջ... Պետութիւնը, պարլամենտները չըպէտք է միջամտեն անգամ բանտրական օրէնսդրութեան մէջ, չը պէտք է կրճատեն աշխատանքի ժամերը, չըպէտք արգելեն մանուկների աշխատանքը մուայլ ու խաւար ածխահանքերում, չըպէտք է բաց անեն դաստիարակչական-կրթական հիմնարկութիւններ պրօլետարիատի համար և այլն և այլն. այդ բոլոր հոգսերը պիտի թողնել իրանց՝ անհատներին, քաղաքացիներին:

Այո, պարլամենտն անդամ մի ճշող հիմնարկութիւն է Սպենսերի կարծիքով: Պարլամենտարիզմի դէմ իր ժամանակում շատ է խօսել և գրել նոյն իսկ անիշխանական ու սօցիալիստական բանակներից դուրս—բայց ոչ մէկը այնքան մոլեղնութեամբ չէ քննադատել այդ հաստատութիւնը, ինչպէս այդ արել է Սպենսերը: Պարլամենտները, ասում է նա, բռնել են միահեծան իշխանութիւնները տեղը, ստանձնել են նրանց պաշտօնը: «Օձման իւղը անցել է մէկ գլխից բազմաթիւ գլուխների վրայ», հաստատել է բազմագլխեան մի բռնակալութիւն: Դա մի ճշմարիտ նախապաշարմունք է, ասում է Սօցիոլոգը. նոր ժամանակների մեծ նախապաշարմունքը, որ նեգրների Ֆէաիշիզմից էլ վատ է...

«Անհատը պետութեան դէմ» գրածքի մէջ—կատաղի յարձակումներ օրէնսդրութեան դէմ ընդհանրապէս: Սպենսեր չէ խարազանում միմիայն «անցեալի տգէտ օրէնսդիրներին», որոնք «անծանօթ լինելով հասարակական գիտութեան հետ, իրենց օրէնքներով շարունակ աճեցրել են մարդկութեան տառապանքները»,—նա ըմբոստանում է առհասարակ օրէնսդրութեան դէմ, օրէնքների դէմ, որ հրատարակում է պարլամենտների «մեծամասնութիւն» կոչուող Աստածը: Ո՛չ մի հեղինակութիւն... Եւ պաղ, Ոլիմպիական գիտնականը ոգևորում է, յիշելով Հնդկաստանի լեռնային խորշերում ապրող վայրենի հօրգաններին, որոնք փախչելով գիշարից ցեղերի յարձակումներից, ապաստանելով անառիկ տեղերում, վայելում են

ինդուստրիական *) տիպի բարիքները, պարապում են երկրագործութեամբ, կառավարում են ընտրովի խորհուրդներով, իրենց նահապետի գուտ անւանական իշխանութեան տակ և չեն ձանաչում ոչ քաղաքական կազմակերպութիւն ու օրէնքներ, ոչ հասարակական դասակարգեր...

— Պետութիւնը պիտի «կրճատուի», աստիճանաբար սահմանափակուի: Նա պիտի յանձնէ իր ֆունկցիաները անհատներին, քաղաքացիներին: Նա պիտի հասնէ իր մինիմումին, պիտի դառնայ լոկ արտագրութեան գործը հոգացող մի հիմնարկութիւն (Administration de justice): Կենտրոնացումը պիտի տեղի տայ աստիճանաբար ապակենտրոնացման: Այդպէս է կարծում Սպենսերը: Եւ դա միանգամայն համաձայնում է նրա ձևակերպած տիեզերական էւօլյուցիայի օրէնքի հետ: Թէ օրգանական և թէ գերօրգանական (superorganique) կամ հասարակական աշխարհում՝ էւօլյուցիան—ինչպէս արդէն տեսանք մեր տեսութեան սկզբում—գնում է հօմօթէնից դէպի հետէրօթէնը, միատարրից դէպի այլատարրը, ընդհանուրից դէպի մասնաւորը: Օրգանները—թէ բիօլոգիական և թէ հասարակական մարմնի մէջ—աստիճանաբար զանազանաւորում ու մասնաւորում են, և դրա հետ զուգընթաց գնում է նաև ֆունկցիաների, պաշտօնների մասնաւորումը (specialisation):

Մ Ա Ն Օ Պ Ո Ւ Թ Ի Լ Ն

Թուս հռչակաւոր սօցիալիստ գրող Միխայլօսկին, Սպենսերի տաղանդաւոր քննադատներից մէկը, հակադրում է «սպենսերական» մասնաւորման զիջ ֆերենցիայ Ն այն ֆորմուլային իր սեփական և օրգինալ «Պրօգրէսի» ֆորմուլան՝ «Ի՛նչ է պրօգրէսը» վերնագրով իր աշխատութեան մէջ, որ լոյս է տեսել 1869 թւին:

«Պրօգրէսը, ասում է Միխայլօսկին, կայանում է նրանում՝ որ մենք աստիճանաբար մօտենում ենք մի այնպիսի դրութեան, երբ անհատը կը յան-

*) Հասկանալի է, որ Սպենսերը «ինդուստրիական» է անւանում ոչ միայն լայն արդիւնաբերող ու հարուստ անտեսութեան տէր հասարակութիւնները, այլ առհասարակ հասարակական ամեն մի դրութիւն, ուր չը կան միլիտարիզմի կաշկանդումները անհատի ազատութեան դէմ, ուր տիրում է անհատների կամուր զործակցութիւն (Coopération volontaire), ի տեղի պարտադիր ու կամուր զործակցութեան (cooperation obligatoire), որ յատուկ է զինուորական ուժի մին:

***) Թարգմանում ենք գրքի Ֆրանսերէն թարգմանութիւնից:

զի իր ամբողջական զարգացման (intégrité des individus *), երբ նրա անդամները, օրգանների միջև կը լինի աշխատանքի ամենակատարեալ ու ամենայլազան բաժանումը և երբ այդ նոյն աշխատանքի բաժանումը իր նւազագոյն չափին կը հասնի մարդկանց միջև:

Այդ ֆօրմուլան ևս ունի իր խոշոր անպատեհութիւնները, ինչպէս առհասարակ սօցիօլոգիական նման ֆօրմուլաները: Նա չի համապատասխանում, նախ և առաջ, անցեալ և ներկայ իրականութեան: Եթէ նա ձեռն լինէր, այն ժամանակ մի շարք խոշոր պրօգրեսիւ իրողութիւններ—ինչպէս, օրինակ, ճորտատիրութեան վերացումը, մեքենայական արդիւնագործութիւնը, կապիտալիզմը և այլն—պիտի համարէինք յիստորիկ երևոյթներ, քանի որ նրանք առաջ են բերել մի զրուծիւն—այժմեան խոշոր ինդուստրիական կեանքը—ուր միլիօնաւոր գործարանական պրօլետար—անհատները, մի տեսակ խօսուէն մեքենաներ զարծած (instrumentum vocale, ասում է Մարքս իր կապիտալի մէջ) ոչ մի հնարաւորութիւն չունին զարգացելու իրենց «ամբողջական» անհատականութիւնը, վարժեցնելու իրենց մարմնի ու մտքի այլ և այլ օրգանները: Աշխատանքի բաժանում չըկայ այդ օրգանները միջև, մինչդեռ, ընդհակառակը, աշխատանքի հասարակական բաժանումը, ապա ուրեմն և մարդկանց փոխադարձ կապակցութիւնը, հասնում են զարգացման զագաթնակէտին:

Ուստի սուրբեկտիւստ սօցիօլոգը ընդհանրում է ապագայի մէջ սօցիալիստական մի զրուծիւն, ուր աշխատանքի հասարակական բաժանումը պիտի հասնէ իր միմիմուսին, ուր ամեն մի անհատ համարեա մեն-մենակ գոնացում պիտի տայ իր այնքան բազմատեսակ կարիքներին... Իսկ էլ մի տեսակ ուօրիկոսական զրուծիւն է—թէպէտ և բարձր, քաղաքակիրթ մտքով—մի տեսակ անիշխանական ապակենտրօնացում, ինդիւիդուալիզմ à la Սպենսեր՝ որ դժուար թէ կարելի լինի ընդունել, իբրև հասարակական էւօլյուցիայի վարձանակէտ:

Յարաձուն ապակենտրօնացում, պետութեան ֆունկցիաների աստիճանական նւազում և անհատի կատարեալ անկախութիւն... Այո, բայց մինչև ո՞ւր...

Անշուշտ, Սպենսեր շատ կէտերում իրաւացի է իր սուր, անողորմ քննադատութեան մէջ՝ ուղղած պետութեան ու պարլամենտների դէմ: Տարակոյս չըկայ, որ ժամանակակից պարլամենտարիզմը դեռ շատ ախտաւոր է, որ «Մեծամասնութիւն—Աստուածը» յաճախ գործում է յանցաւոր սխալներ, որ պարլամենտները երբէք չեն ներկայացնում ազգի իրական մեծամասնութիւնը, միշտ չեն արտայայտում այդ վերջինի արամազրուծիւնը, որ ամեն մի պատգամաւոր, Լաբլէյի ասելով, միայն ինքն իրան է ներկայացնում և կարող է «այո» ասել այնտեղ, ուր իր ընտրողները «ոչ» կասէին, որ փոքրամասնութեան իրաւունքները ամեն տեղ արճամարհւած են և այլն:

Սակայն Սպենսերի «վարչական նիհիլիզմը» չէ (nihilisme administratif, —այդպէս է որակել բնագէտ Հէքսլին Սպենսերեան սիստեմը), որ պիտի դարձանէ այդ չարիքներին: Եւ նրա ծայրայեղ ինդիւիդուալիզմը չէ, որ պիտի ապահովէ անհատի իրական ազատութիւնը:

«Գուցէ մի օր—ստոււ է Լէտուրնօ իր «Քաղաքական էւօլյուցիա»-ի մէջ, քննադատելով Սպենսերի հայեացքները—մի օր գուցէ, մի շատ հեռաւոր օր, անտարակոյս, մեր երկրագունդը բնակեցրած կը լինի, Հերբերտ Սպենսերը ցանկութեան համեմատ, բարոյսպէս և մտաւորապէս կատարելագործւած այնպիսի մարդկային ցեղերով, որ հնարաւոր կըլինի առանց վտանգի սահմանել անիշխանութիւն, այրել բոլոր օրինագրքերը և նորերերը այլևս չը գրել: Այնքան կատարեալ պիտի լինի մեր, անարժան պատերազմային պանծալի սերունդը, որ նրա իւրաքանչիւր անդամը բնազդմամբ պիտի գործէ յանուն ընդհանուր բարօրութեան. էգօյիզմը, այդ յաճառ, դիմացկուն որոմը, որ մենք այսօր չենք յաջողում արժատասիլ անել մեր սրտերից, պիտի տեղի տայ այդ գուտած, մարդկութեան մէջ՝ լայն ու բանաւոր ալտրոսիզմի, այլախիռութեան: Իսկ կը լինի ոսկէ գարը. մարդիկ հրեշտակներ կը լինին դարձած և, յիրաւի, հրեշտակները պէտք չունին կառավարութեան: Մի բան, որ հաստատապէս կարելի է ասել, մնալով անցեալ և ներկայ փորձերի շրջանում, այդ այն է՝ որ մինչև այժմ ոչ մի ժողովուրդ չէ ապրել առանց քաղաքական կազմակերպութեան, բացի ամենափոքրիկ մարդկային հօրդաններից: Եւ այնտեղ, ուր տակաւին չը կայ ամուր հաստատուած կառավարութիւն, ինչպէս օրինակ հիւսիսային Ամերիկայի էսկիմօսների մէջ, կան սովորութիւններ, որոնք օրէնքի ոյժ ունին և սահմանաւորում են անհատի վարքը» *):

Այս խօսքերով կարելի է պատասխանել ժամանակակից անարխիզմի (անիշխանական վարդապետութեան) թէօրեալիկոսներին, որոնք տարւած հասարակական մի ծայրայեղ լաւատեսութեամբ, սոցիալական տիեզերական ինչ որ չեղած ներդաշնակութեան գաղափարով (harmonie universelle) ծրագրում են ապագայի համար մի հասարակական կազմակերպութիւն, ուր ոչ մի կառա-

*) Ch. Letourneau, L'Evolution Politique, p. 537.

վարութեան հետքն անգամ չը պիտի լինի, ուր սնահատը պիտի վայելէ բացարձակ ազատութիւն, ուր քաղաքացիները, առանց օրէնքերի, առանց որեւէ մարմնի միջամտութեան ու հրահանգների՝ իրանք իրանց պիտի միանան, համաձայնութեան գան և կանոնաւորապէս առաջ տանեն իրենց հաւաքական ձեռնարկները, ինքնայորոք գործակցութեամբ (Coopération spontanée) պիտի վարեն հասարակական-տնտեսական վիթխարի մեխանիզմը...

Սակայն չը կարծէք, ընթերցող, թէ անգլիական ձեռն փիլիսոփայ-սօցիոլոգը անիշխանականների պէս տոգորւած է դէմօկրատիզմի, ռամկավարութեան սկզբունքներով, մարդկանց հաւասարութեան մեծ դօքտրինով: Բոլորովին հակառակը: Անիշխանականները մեկնում են այն դրութիւնից՝ որ մարդիկ իբր թէ «խկզբանէ անտի» օժտւած են համերաշխութեան, սիրոյ, աւտորուիզմի բնազդուններով, որ տնտեսական ու քաղաքական հաստատութիւնները փչացրել են նրանց և որ այդ հաստատութիւնները տապալակելով ու հաւասարութիւնը թագաւորելով՝ մարդկանց բնաւորութիւնները ևս պիտի արմատապէս յեղաշրջի և պիտի վերածնունդ տա յայն «տիեզերական ներդաշնակութեան» մէջ... Իրօք հրեշտակների մի աշխարհ, ուր էլ չեն լինի անասնական «ես»-ի արտայայտութիւնները, ուր մի անգամ ընդմիջտ չբացած կը լինի հագարուր դարերից ի վեր մարդկային էութեան խորքերում մրափող գազանը... Երանութեան աշխարհ, բայց և դժբախտաբար, շատ ֆանտաստիքական մի երազ—աշխարհ, ուր այլ ևս երբէք մարդկանց փոխադարձ յարաբերութիւնների մէջ մուտք չեն գործի հարկադրիչ միջոցները, ոյժը, ստիպումը (Contrainte, Zwang) . Մարդիկ կ'աշխատեն ու կ'արդիւնաբերեն ինքնաբերաբար, նրանք կը բաշխեն ու կը սպառեն արտադրածը ինքնաբերաբար, նրանք կը հոգան հաղորդակցութեան, դաստիարակութեան, կրթութեան և այլ բոլոր գործերը ինքնաբերաբար—և այդ հսկայական, բարդ պրօցէսի մէջ իւրաքանչիւր անհատ պիտի վայելէ բացարձակ, արքայի անսահման ազատութիւն, իւրաքանչիւրը պիտի կատարէ ամենաճշգրիտ կանոնաւորութեամբ իր հասարակական պարտաւորութիւնները և լիակատար գոհացում պիտի տայ իր անհատական բոլոր պահանջներին, առանց մտնելու ուրիշի ազատութեան սահմանների մէջ... Երբէք զեղծում, երբէք դժգոհութիւն, ոճիր ու յանցանք, երբէք, հետեւապէս, և ստիպողական միջոցների և

իրաւական կօդէքսների անհրաժեշտութիւն... Այդտեղ է անիշխանական վարդապետութեան մեծ մոլորութիւնը:

Սպենսերը հեռու է մարդկային բնատուր պարունակը երգելուց և հաւասարութիւնը ներբողելուց: Նա անհաւասարութեան իդէօլօգ է par excellence, և բուրժուազական մտածողների շարքում ամենասահարկու հակառակորդն է բոլոր հաւասարացնող վարդապետութիւնների: Նա դարւնի ջերմ հետեող է և փոխադրում է նրա օրէնքները սօցիոլոգիայի մէջ: Դարւինը հռչակում է «բնական ընտրութիւնը», որի շնորհիւ կենդանի էակները, ամենական ընտրութիւնից գրութիւնից աստիճանաբար զարգանալով, հասել են ներկայ կատարելագործման: Սպենսերը հռչակում է նոյն ընտրութիւնը մարդկանց աշխարհում: Այդտեղ ևս, նրա կարծիքով, անհաւասարութիւնը գերագոյն օրէնք է, ինչպէս բնութեան մէջ: Նա իթան է առաջադիմութեան, կատարելագործման: Մարդիկ տարբեր են իրենց մտաւոր, ֆիզիքական ու հոգեկան կարողութիւններով, իրենց հակումներով: Կան «լաւերը» և «վատերը», կան «աշխատասէրները» և «ծոյլերը»: Մէկը իր բնատուր առաւելութիւնների շնորհիւ՝ դիւրութեամբ յարմարւում է տիրող կացութեանը և բարձրանում հասարակական առաջադիմութեան սանդուղքով, միւսը իր պակասութիւնների շնորհիւ՝ անընդունակ է հանդիսանում յարմարման (adaptation) և մնում է թշուառութեան մէջ: Պրօլիտարիատը, Սպենսերի կարծիքով, հէնց այդ անընդունակ, չը յարմարող տարրն է: Նրա վիճակը, նրա տանջանքները բնութեան անագորոյն մի պահանջ են: «Ոչ մի ոյժ երկրագնդի վրայ, ոչ մի օրէնք, յղացւած ճարպիկ օրէնսդիրների կողմից, ոչ մի նախագիծ՝ մարդկային գործերը շտկելու սահմանւած, ոչ մի կօմմունիստական համադարման, ոչ մի բարենորոգում, որ երբ և իցէ արել են մարդիկ կամ պիտի անեն,—չեն կարող մի նշանախեց անգամ պակասացնել այդ տանջանքները»...*)

Ուժեղը պիտի յաղթահարէ թոյլին—անհայն «բարերար, թէպէտև անողոր դիտցիպլինը, որին ենթակայ է ամբողջ շրջաւորւած բնութիւնը» և որը միակ դրաւականն է նաև մարդկային տեսակի առաջադիմութեան ու բարօրութեան...

*) Spencer, L'Individu contre l'Etat.

Հասկանալի է, ուրեմն, թէ ինչու Սպենսեր այնքան մոլեգնութեամբ խարաղանում է ոչ միայն հաւասարացնող վարդապետութիւնները, այլ և նոյն ինչ պարզ բանութեան օրէնքները, որոնք թիւնը և այն բոլոր պետական-հասարակական միջոցները, որոնք նպատակ ունեն բարձրացնել ու բարելաւել չքաւոր դասակարգերի վիճակը: Հասարակական բարեգործութիւնը, հասարակական ճրի ուսումը, հաւասարացնող ձգտում ունեցող որոշ հարկերը և այլն, — այդ բոլորը նպաստաւորում է տկար, անընդունակ մարդկանց աճումը, քիչ տեղ թողնելով կեանքի ընտրեալներին, արտօնեալներին: Եւ դրա հետեանքն է սօցիալական այլասեռումն: Հասարակական ճրի ու պարտադիր ուսման սխառեմը զոհողութիւններ է պատճառում նաև անգաւակ քաղաքացիներին. իսկ դա, ըստ Սպենսերի, անարդար բան է: Անարդարութիւն է նպաստել մէկին, — թէկուզ և չքաւորին, ի հաշիւ միւսի, — թէկուզ և հարստի: Իւրաքանչիւրը պիտի վայելէ այնքան, որքան ինքն անձամբ ընդունակ է վաստակել կեանքի կուր մէջ: Ոչ աւելի, ոչ պակաս: Հանգիստ թողէք և բուրժուային և պրօլետարին: Անհատական կատարեալ ազատութիւն է, laissez faire, laissez passer! Ուրիշ խօսքով, ձեռքէք իւրաքանչիւրին իր ճակատագրին, թողէք, որ միլիոնաւոր աշխատող ընդհանրութիւնը և գործարաններից դուրս շարժուած հարիւր հազարաւոր «աշխատադուրկ» պարիստները, որոնք սլքբաւում են, մերկ ու կիսաքաղց, մայրաքաղաքների մայթերի վրայ, թողէք որ ապրեն ինչպէս կարող են: Չեն կարող ապրել, — թողէք, որ մեռնեն: Անհատը ազատ է, ազատ ապրելու և ազատ մեռնելու...

Անա թէ ուր է տանում Սպենսերական ինդիւիդուալիզմը: Մի դաժան, անսիրտ սօցիալական դօքտրին: Մի հզօր տաղանդ, որ ծառայում է, տարաբախտաբար, դասակարգային բիրտ շահերի, առանձնաշնորձման ու անիրաւութեան: Գրեթէ անհնարան ստուծիւն դէպի ճնշւած, հարստահարւած աշխատաւոր ընդհանրութիւնը ..

Եւ սակայն, որպիսի մոլորութիւն: Որքան հակադիտական է և իրականութեան անհամապատասխան Սպենսերի այդ թէկիսը, որ հռչակում է մարդկանց բնական անհաւասարութիւնը և որ այսօր նրա բաղձաթիւ աշակերտների ձեռքում շարունակում է ծառայել իշխող դասակարգերի շահերին... Եւ ամենից առաջ

Սպենսերին ասելի կօմունիզմն է, որ մերկացնում է այդ դաժան թէօրիայի հակադիտական հանգամանքը:

Կօմունիստ-մտածողները, որ նոյնպէս Դարւինի ջերմ հետևողներ են, հաստատում են՝ որ բնութիւն և մարդկան հասարակութիւնն տարբեր բաներ են, որ նրանք տարբեր օրէնքներով են ղեկավարւում, որ գոյութեան կուր փաստը բոլորովին ջոկ բնոյթ ունի ժամանակակից հասարակութեան մէջ, որ այնտեղ նա ընդունում է տնտեսական-դասակարգային կուր կերպարանը, որ դասակարգային կուրը չէ մղւում լոյալ, օրինաւոր կերպով, օրինաւոր գէնքերով, որ յաղթողները յաճախ հանգիստանում են մարմնով, մտքով ու հոգով տկարները, որ նրանք յաղթում են ոչ թէ իրենց բնատուր ձիրքերով, առաւելութիւններով, այլ այն պատճառով, որ դրամագլխի, փողի ոյժն ունեն, մի ոյժ, որ վաստակում է (յաճախ ժառանգւում), առանց անձնական մեծ ճիգ գործ դնելու, ուրիշի աշխատանքը շահագործելով... Կօմունիստները ասում են և այն՝ որ մարդ-էակները իրանք են նիւթում իրանց պատմութիւնը, ականջ դնելով սօցիալական էօլիւցիայի ձայնին և ոչ թէ անբան անասունների պէս, համակերպելով բնութեան Փատալ օրէնքներին. նրանք ասում են՝ որ գոյութեան կուրը «յաղթածները» (Սպենսերի լեզուով՝ ծոյլերը, վատերը, անընդունակները) իրօք ապագայի յաղթողներն են, որ աշխատաւոր պրօլետարիատի լէգիօնները ամբողջ աշխարհում կազմակերպւում և միշտ աճելով ու տարածւելով, դիմում են դէպի ապագայի նւաճումը...

Այո. և այդ նւաճումը, կօմունիզմի այդ յաղթանակը չի բերի ստրկութիւն, ինչպէս Սպենսերն է կարծում, նա չի վերադարձրի միլիտարիզմի շարիքները, չի նսեմացնի, չի ճնշի անհատին, ընդհակառակը. նա ճնունդ կը տայ մի սօցիալական կազմակերպութեան, ուր իբրև գերագոյն համադրութեան, սինթէզի մէջ կը ներդաշնակւին, կը միանան, վերջապէս, անհատն ու հասարակութիւնը՝ մինչև օրս հակամարտ, անտաղտօնիստ՝ ուր դասակարգային բաժանումները իսպառ վերանալով, կը վերանայնաև գոյութեան կուր բիրտ ու ապօրինի ներկայ ուժիմը և տեղի կը տայ խաղաղ, օրինաւոր մրցակցութեան մտաւոր, կուրտուրական ասպարէզում, ուր անհատը — առաջին անգամը մարդկային անձայր պատմութեան ընթացքում — հնարաւորութիւն կունենայ զարգացնելու իր բովանդակ անձնաւորութիւնը, լիակատար գո-

հացուժ անառու իր անհատական բոլոր պահանջներին. այն ժամանակ միայն կը թագաւորէ ճշմարիտ, բանաւոր ինդիւիդուալիզմը, զտաժ, մաքրաժ՝ թէ կապիտալիստական Laissez faire-ի կաշկանդումներից և թէ անիշխանական սանձարձակ սոցատութեան տարկանոնութիւններից:



Լ Ո Յ Ս Ե Ն Տ Ե Ս Ե Լ

1. Բախ.—Հարուստ. և աղքատ. II տպագրութիւն . . . 15 կոպ.
2. Պեւեկոնով.—Հոսց. լոյս և աղատութիւն . . . 12 »
3. Ֆէդորովիչ.—Ինչպէս են ծագով. և ծախս. ծոյ փող. 5 »
4. Կարմելիւկ.—Նոր լեր. բար. 2 »
5. Չեւեով.—Գիւղ. և բանուորը 15 »
6. Պեքեբրասովեւ.—Ազգ. հարցը և սոց.—դեմոկրատիան . . . 5 »
7. Պրամպովիւի.—Գիւղացիները. 5 »
8. Ե. Փոլիսեան.—Արշևատ. միութիւններ . . . 15 »
9. Նովոսոբովի.—Ինչ է իրական պետութիւնը . . . 15 »
10. Ն. Կարանով.—Հոգ. հարցը Նոր-Չեխանդիայում . . . 2 »
11. Ժամ Ժօրեւ.—Բարձ. սեփ. և նրա ապագայ գրաւումը . . . 5 »
12. Ս. Արեղեան.—Դեմոկ. ընտ. 12 »
13. Կառ ցկի.—Ազգութիւնները հարցը Ռուսաստանում . . . 3 »
14. Ա. Անտրոնեան (Ղարիբ)—Ազատութեան ճանապարհ. 80 »
15. Ֆ. Լասայ.—Սահ. էութ. մաս. 5 »
16. Ա. Ն. Ինչպէս կարելի է լուծել հողային հարցը . . . 12 »
17. Վ. Գալուբով.—Ինչ է ժող. 2 »
18. Ս. Չաւարեան.—Վիճակագր. տեղ. գիւղ. ազգայնակ. 25 »
19. Ալժոնս Դիւնան.—Ժողով. օրէնս. դաշ. Չեխեբերայում 20 »
20. Դիկեսէյն.—Ո՛վ ինչ է սոյր. 7 »
- 21.—Մի գրոյց հողի մասին 5 »
22. Լ. Շիւկօ.—Ազգ. ծր. հարցը 7 »
23. Ս. Նիկոլայեւ.—Կօօպերացիան 5 »
24. Շտայ. օդա. ձեք իրաւունք. 1 »
25. Լ. Պետով.—Երկու ծրագիր 20 »
26. Ս. Վ. Կոսեկ.—Պետ. կազմակերպ. հիմքերը Արևմտ. 12 »
27. Անսկիլ.—Գիւղաց. հարցը Ֆրանսիայում . . . 7

28. Մ. Յովնաննիսեան.—Դաշն. և նրա հակառակորդները 50 կոպ.
29. Ժ. Գեդ. Էս պ. Լաճարգ.—Տնտես. դարգ. և Սօցիալիզմ 5 »
30. Նովոսոբովի.—Ազգ. հարցը, Առօրեայ և Ֆէդերացիա 7 »
31. Խորամանկ կարգեր . . . 7 »
32. Մ. Յովնաննիսեան.—Գորպ. հանգույցը (տաճկահ. խնդիրը մերջ. շրջ.) . . . 20 »
33. Հրահանգներ դատա. համար 34. Վ. Չեքեով.—Դատակարգչին կաթի թէօրիայի շուրջը 10 »
35. Լ. Շիւկօ.—Նաղագոյն ծրագիրը . . . 12 »
36. Ս. Նեկրասով.—Ինչ կարգեր են հարկատու ժողովրդին 10 »
37. Ս. Շախար.—Ֆէդերացիայի և դեմոկրատիզմ . . . 30 »
38. Արամայիս.—Վնասակարը 4 »
39. Արամայիս.—Մի բանի գլուխ հայ-թրքական ընդհար. . . 25 »
40. Մ. Յովնաննիսեան.—Վովկ. Վանդ. (հայ-թրք. ընդհար.) 25 »
41. Շ. Գօրցիւ.—Ինչպէս իրականացուցիւ հաւաս. . . 7 »
42. Գ. Խամակ.—Դէպի ֆէդեր. 80 »
43. Վ. Չեքեով.—Պրօլետար. և աշխատաւոր դիւզացիութիւնը 18 »
44. Արամովա.—Գիւղացիներ և բանուորը . . . 3 »
45. Լ. Վանդերլիլդ.—Բանուոր դատակարգ. գրութ. Բեկդիայում 45 »
46. Ս. Չակ.—Հող և կապիտալիզմ . . . 15 »
47. Վանե.—Անջատումները 10 »
48. Մ. Յովնաննիսեան.—Փիլիսօփայ Սօցիոլոգ . . . 15 »

Պատրաստուում են տպագրութեան համար մի շարք ուրիշ գրքեր:

Դիմել՝ Բագու «Մասրուդնիկին»
 Երևան.—Մ. Օհանջանեանին.
 Թիֆլիս Նիկ. Մատինեանին «Փարոս».
 Յանկացողները կարող են ստանալ գրադարանի բոլոր գրքերը
 միասին, չըվճարելով ճանապարհածախսը:

« Ազգային գրադարան



NL0152620

